



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպածել կուրք ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Фиркин

Книги

9(44)

5-88

1931

Ա. ՄՈՆՈՍՈՎ

# ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԻՏԵ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОССОЛЮВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԳԵՂԱՔ

1931

ԵՐԵՎԱՆ

9(44)  
45-88

30 MAY 2011 32-K  
LA 1/33

2 JAN 2006

ԳԱՅՈՒՄ

БИБЛІОТЕКА  
ІНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академії Наук  
ССР

# ՓԱՐԵԶԻ ԿՈՄԱԿՆԱ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 1931 ԱՐԵՎԱԿԱՆ

84 JUL 2013

2198/1

ԹԵՏՐԱՍԻ ՏՊԱՐԱՆ  
ՀՐԱՏԱՐ. № 1651  
ԳՐԱՌԵԴ. 6424 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 2801  
ՏԻՐԱԺ 4000.



59894-66

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԱՑԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ<sup>1)</sup>

60 տարի սրանից առաջ Ֆրանսիայում Փարիզի բանվորներն ու արհեստավորները հեղափոխություն կատարեցին։ Այդ հեղափոխությունն իշխանության դլուի կանոնեցրեց մի կառավարություն, վորը հանդիսացավ Խորհրդային Միության մեջ արդեն 13 տարի գոյությունի ունեցող պերութարական դիկտատուրայի նախատիպը։ Այդ հեղափոխության բուն ակտը 1871 թ. մարտի 18-ի ապատամբությունն էր, վորը ստեղծեց Փարիզի կոմունայի կառավարություն։

Փարիզի կոմունայի առաջացումը սկսուրեն կապված է Նապոլյոն III-ի կայսրության անկման հետ, վորը Ֆրանսիայում գոյություն ուներ 19 տարի չարտահակ։ Նապոլյոն III կայսրը իշխանություն ձեռք բերեց պետական հեղաշրջման հետեւվանքով։ Այդ հեղաշրջման միջոցով նա վիրացրեց 1848 թ. հեղափոխությամբ ստեղծված հանրապետությունը։ 1848 թ. հեղափոխությունը կատարեցին արհեստավորներն ու բանվորները։ Այդ հեղափոխությունը կատարելով նրանք ցանկանում ենին ստեղծել այսպես կոչված՝ սոցիալիստական հանրապետություն, այսինքն՝ մի հանրապետություն, վորն իրականացներ սոցիալիստական ձեռնարկումներ, ինչպես այդ հասկանում ենին բանվորներն այն ժամանակ։ Նրանք

1) Այս բրույրի հիմքն ե կազմում «Հեղափոխական չարժումների պատմությունը» գրքի «Փարիզի կոմունան» գլուխը. Ծանոսովը լրացրել և վերաժշակել ե այդ գլուխը։

սպասում եյին, թէ կկազմակերպվեն բանվորական արտելներ պետության հաշվին և բոլորը կամահովվեն աշխատանքով, սակայն, բուրժուազիան, վորի ներկայացուցիչները մհծամասնություն եյին կազմում հեղափոխական պայքարից առաջացած ժամանակավոր կառավարության մէջ և գերիշխում եյին հետագա բոլոր հանրապետական կառավարություններում, ցանկանում եր միայն բուրժուազիան հանրապետություն և չեր կամենում լսել և վոչ մի սոցիալիզմի մասին։ Դրա հետեւվանքով պրոլետարիատի և բուրժուազիայի միջև տեղի ունեցավ արյունահեղ ընդհարում։ 1848 թ. հունիսին Փարիզում ապստամբություն բռնկվեց, վորը, չնայած բանվորների ցուցաբերուծ մհծազույն արիության, դաժանաբար ձնշվեց։ Զնայած այդ ապստամբությունը պատկենալիք բուրժուազիայի հաղթանակով, այնուամենայիվ, սարսափի ազգեց նրա վրա և հարկադրեց մտածելու զինված ուժի վրա հենվող ամուռ իշխանության մասին։ Այդ սարսափի պայմաններում աճեց վողորմելի մի մարդու՝ ավանտյուրիստ Լուի Բոնապարտի հեղինակությունը, վորը համարվում եր Նապոլյոն I կայսեր ազգականը։ Լուի Բոնապարտի հեղինակությունը մեծ եր նաև Փրանսիական դյուլացիության մէջ, վորը գեռ դիտակցության չեր յեկել, ընկճված եր հարկերի ծանրություն տակ և դողում եր իր հոգային սեփականության համար։ Գյուղացիությունը վախեցել եր բանվորների կտորած քայլից։ Բուժուազիայի և բոլոր հակա հեղափոխականների գործակալներն աշխատում եյին պրոլագոնայի միջոցով գյուղացուն վոտքի հանել ընդդեմ հեղափոխականության, ընդդեմ բանվոր պասակարընդդեմ հեղափոխականի միջոցով։ Գյուղացիներին ներշնչում եյին, թի

ծույլ ու անգործ բանվորները ցանկանում են ապրել ի հաշիվ պետության, վոր նրանք մտածում են բաժանել գյուղացիների ունեցած հողը։ Սեփականության վախր գյուղացիներին նետեց Լուի Բոնապարտի գիրկը։ Գյուղացիները կարծում եյին, թէ յեթե նրա հորյեղբայրը նա պոլոն Լը ամրացրեց նրանց սեփականությունը, վոր սացել եյին XVIII դ. վերջում կատարված հեղափոխության ժամանակ, ապա նրա ազգականն այժմ կազատի այդ սեփականությունը բաշխում էց։ Հատկապես գյուղացիների ձայներով եր, վոր Լուի Բոնապարտի ընտրվեց հանրապետության նախագահ։ Այդ ընտրությունը պետական հեղաշրջման սպառնալիքի և նրա կտարման ուղղությամբ արված մի քայլ եր արդեն։ Լուի Բոնապարտը չեր ցանկանում սահմանափակվել պրեզիդենտի գերօվ։ Բուրժուազիան հանրապետության դրությունը շատ անկայուն եր. բուրժուազիան դադում եր պրոլետարիատի առաջ, իսկ գյուղացիությունը վախենում եր իր հոգակորի համար։ 1848 թ. աշնան պրեզիդենտ ընտրված Լուի Բոնապարտը 1851 թ. դեկտեմբերին հեղաշրջում առաջացրեց՝ հենված բանակի և բուլոր ունեցող տարրերի համարանքի վրա, վորոնք իրենց սեփականության պահպանման համար ցանկանում եյին ունենալ կայուն իշխանություն։

Լուի Բոնապարտը, վոր կայսր գարձավ Նապոլյոն III անունով, փորձում եր հենվել հասարակության ամենաբարձարան գաղափարների վրա, ցանկանալով թվալ գերասակարգային միապետ։ Իսկ իրականության մէջ նապոլյոն III-ի կառավարությունը պաշտպանում եր վայրառու Փինանսական բուրժուազիայի շահերը, վորը «կիրառում եր բազմատեսակ արտատիեսական մեթոդ-

իր իր հարստացման համար, կարիք եր զգում կապեր  
հաստատելու քաղաքական իշխանության հետ»—իր  
ավանդուրիստական գործարքները կատարելու համար:

Նապոլյոն III-ի մտցրած սահմանադրությունը,  
վոր Նապոլյոն I-ի սահմանադրության ընդորինակումն  
եր, համարյա գերողի հավասարեցրեց յերկրի քաղաքա-  
կան կյանքը: Վարչական կամայականությունն սպա-  
նում եր քաղաքացիական ազատությունները: Գոյու-  
թյուն ունեցին սահմանադրություն և պալատ, բայց  
պալատը գումարվում եր տարեկան միայն 3 ամիս, և  
նրա անդամներն իրավունք չունեցին վոչ որինագծեր  
ժայռնելու, վոչ ել շտկումներ կատարելու կառավարու-  
թյան որինագծերի մեջ: Գոյություն ունեց ընդհանուր  
ընտրական իրավունք, սակայն ընտրությունների ժա-  
մանակ կառավարությունն ամեն միջոց ձեռք եր առնում  
ճնշում գործադրելու ընտրողների վրա և պալատ անց-  
կացնելու իր մարդկանց: Այդպիսի ճնշման մի նմուշ  
կարող է հանդիսանալ սուլորեֆեկտի հետևյալ նամակն՝  
ուղղված դեպարտամենտի\*): Նախադահներից մեկին.

«Վաղը սկսում են ընտրությունները: Պատիվ  
ունենք հիշեցնելու ձեզ, վոր գուք ընտրություն-  
ները պետք ե սկսեք առաջին պատարագից անմի-  
ջապես հետո, վոր ձեր առաջ սեղանի վրա պետք ե  
լինեն վորոշ քանակությամբ բյուլետեններ պարոն

Դաւամալի և վոչ վորեվե ուրիշ մեկի անունով: Կա-

\*): Գեպարտեմենտ Ֆրանսիայում կոչվում են խոշոր քարչական  
տերիտորիալ միավորները, վորոնցից կազմված ե յերկրը: Յու-  
րաքանչյուր գեպարտամենտի գլուխ կանգնած ե կենտրոնական  
իշխանություն ներկայագուցիչ պրեֆեկտը: Նրա սպահանու սուպ-  
րեֆեկտն է: Մեր կոչվում են քաղաքային և գյուղական համայնք-  
ների ընտրովի նախադահները:

րեվորն այն և, վոր վարչության շենքի մուաքերի  
առաջ կանգնեցված լինեն խելահաս և հուսալի մար-  
դիկ՝ Դալմայի անունը կրող բյուլետեններով, վոր-  
պեսզի իրենց բարեհուսությամբ հայտնի ձեր կո-  
մունայի ընտրողները նախազգուշանան սխալներից  
և խարիւլուց... Հարգարժան տեր, պարոն նախա-  
գահ, ուժանդակեցեք, վորպեսզի ընտրողները մաս-  
սայորեն քվեարկեն հոգուտ կառավարության թեկ-  
նածու պարոն Դալմայի»...

Բայց բուրժուազիան բարգավաճում եր տնտեսա-  
պես: Նապոլյոն III-ի ժամանակ Ֆրանսիան շարունա-  
կում եր առաջ գնալ տնտեսական զարգացման ուղիյով: Կապիտալի աճումն ու կենտրոնացումը հասան զարդաց-  
ման բավական բարձր աստիճանի՝ նախընթաց դարա-  
շրջանի համեմատությամբ: 1851 թ. մինչեւ 1869 թ.  
Ֆրանսիայի հարստությունը կրկնապատկվեց: 1866 թ.  
յերկրի առելքութական ըջանառությունը 5 անգամ զե-  
րազանցում եր 1848 թ. շրջանառությանը: Զերմաշարժ  
ունեցող ձեռնարկություններ կային 1852 թ. 6500,  
1862 թ.—15.000 և 1870 թ.—23.400: 1840 թ. քարա-  
ծուխ հանվել ե 3 միլ. տոնն, 1862 թ. 10 միլիոն տոնն,  
1840 թ. յերկաթ հանվել ե 245.000 տոնն, 1862 թ.—  
781.000 տոնն:

Կապիտալիզմի այդ աճումը զուգորդվում եր կա-  
պիտալ բավական մեծ կենտրոնացումով: Ֆրանսիական  
բանկը հետզհետե կուլ տվեց բոլոր գեպարտամենտների  
բանկերը: Հողային վարկի յերեք գլխավոր ընկերու-  
թյուններ ձուլվեցին մեկի մեջ: Յերկաթուղային ցանցը,  
վոր Նապոլյոն III-ի կայսրության տարիներին աճել եր  
8 և կես անգամ (1850 թ. 2000 ք.մ., 1870 թ. 17.000

ք. մ.), անցավ ընդումենը 10 ընկերության ձեռքը, վուխանսկ նախկին 42-ի: Ընդհանուր առմամբ 1869 թ. բոլոր խոչոր Փինանսական հիմնարկներն ու արդյունա-բերական ձեռնարկությունները պատկանում են ընդումենը 180 հոգու՝ 20 մլրդ ֆրանկ կազմակերպված:

Ֆինանսական սպեկուլյացիայի փարթամ, ըայց թունավոր ծաղիկը բացվեց և զարժանալի փայլ ստացավ: Արտաքին փայլի, զանազան ավանդությաների և պատերազմների քաղաքականությունը, վորոնք զարձել եյին Փինանսական ձեռնարկությունները, արտասովոր կերպով նպաստում էր Փինանսական սպեկուլյացիայի զարգացման: Մասնայուն հիմնվում եյին Փինանսական ընկերություններ և փայտիբական բանկեր: Բորսայում մի ծոլեզին խաղ եր կատարվում: «Հարստացման և սպեկուլյացիայի անհանդիսու վորին, վորպես տարավուսիկ տենդ, տարածվում եր ամենուրեք»: Ինքը կայսը հնարեց վոսկե ծողերի զիճակախաղ: Հասարակությունը ձեռքից ձեռք խլելով, 7 միլիոն տոմս զնեց: Վերջում պարզ վեց, վոր հաստարակված տոմսերը կեզծ են: Բորսայից, փայտիբական ձեռնարկությունների տեղերը դրության տերն եյին: Նրանք հաստատվել եյին պետական բարձր հիմնարկություններում, նրանց համար պատերազմներ եյին մղվում, նրանց ըալաշտականում եր կառավարությունը, նրանք հասնուներ եյին արծակում մամուլի միջոցով, զարձնելով այն իրենց պրեյս-կուրանտը և ուկիլամբը:

Եսույնքան վորպալի վիճակի մեջ եր մանր բուրժուազիան: Մեքենական տեխնիկայի զարգացումը և տուանձնապես կուպիտալի կուտակումը կործանարար պղկեցություն եյին դործում մանր բուրժուաների

միքա: Նրանք հեծում եյին շոտաղ վճարումների լծի տակ: Նրանք տուժում եյին բորսայական կուրսի մըշտական տատանումներից: Նրանք ավելի ու ավելի անհուսալի կերպով մասնկանում և մոլորվում եյին այն ամուր վոտուայնի մեջ, վոր նրանց համար հյուսնելի մեջին պաշխառուներն ու Փինանսական արքաները:

## ԲԱՆԿՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մանր բուրժուալյան, արհեստավորներն, ինչպես առաջ, չափազանց մեծ թիվ եյին կազմում, առանձնապես Փարփկում: Եոր խոչոր արդյունարերությունը գլխավորապես հիմնվում եր Ֆրանսիայի հյուսիսարելելքում: Ճիշտ ե, Փարփկում նույնպես հիմնրվում եյին գործարաններ և յերկաթուղային արհեստանոցներ, բայց նրանց պրոֆետարիատը կազմում եր Փարփղի աշխատավոր բնակության մեկ իններորդ մասը միայն և աննկատելի յեր մնում արհեստավորների այն մասսայի մեջ, վորոնք աշխատաւմ եյին գեղարվեստական արդյունարերության և պերճանքի առարկաները պատրաստելու ասպարիզում:

Կապիտալը հաջողությամբ գրոհում եր նաև արհեստների այս ամրոցի վրա, արհեստավորներին բայցին թողնելով միայն կարծեցյալ ինքնուրույնություն: Արհեստավորը կապիտալի ճնշման ներքո դառնում եր խոչոր խանութի կամ բաշխող տիրոջ ստրուկը: Բայց, վորքան ել ծանր լիներ արհեստավորի դրությունը, պրոլետարի վիճակն ավելի ծանր եր: Բանվորը հանձնված եր տերերի բահանձույթին, զուրկ եր համախմբելու իրավունքից և անտեղյակ աշխատանքի վորեն պաշտպանությունից:

իր տատանվող, մեկ դաօակարգից մյուսին դիմող քաղաքականությամբ կառավարությունը վորոշ ժամանակից սկսած խաղ եր խաղում բանվորների և արհեստավորների գլխին, ցանկանալով նրանց վերջնել եր ձեռքը և ոգտագործել բուրժուազիայի ոպողիցիոն տարրերի ղեմ : Մեկ անգամ կայսրը 5000.000 ֆրանկ գոհաբերեց հոգում բանվորական կոոպերացիայի, մերթ կառավարությունն եր ձեռնարկում բանվորական փոխաղարձ ոգնության ընկերությունների կազմակերպման, վորոնք գտնվում եյին կայսրական գեներալների կամ քահանաների խնամակալության ներքո և իրենց մեջ ընդունում եյին նաև ձեռնարկատերերին : Վերջապես, 1864 թ. կառավարությունը վճռեց վերացնել 74 տարի շարունակ դոյություն ունեցող այն որբենքը, վորն արգելում եր բանվորական կազմակերպությունների գոյությունը : Սակայն, 1868 թ. բանվորական միություններ կազմակերպելու թույլ տվությունը և սինդիկալ պալատների (արհեստակցական կազմակերպություններ) ստեղծումը չխանգարեցին կառավարությանը գործադուների ժամանակ բանվորներին գնդակահարելու և նրանց առաջնորդներին բանտ նետելու : Այդ հանգամանքն ապացուցում է, վոր կայսրության վոստիկանական ոեժիմի պայմաններում բանվորներին տրված րոլոր ապատությունները մնում եյին, վորպես պարապ խոսք :

Գործադուլային շարժումը հետեւանք եր պրոլետարիատի նյութական ծանր կացության : Զնայած կայսրության դարաշրջանում աճում եր բանվորների աշխատավարձը, սակայն քաղաքային ընակչության աճման հետեւանքով խոչը կենտրոններում ավելի ևս բարձրանում եյին սննդանյութերի և բնակարանների

գները : Յեթե կայսրության գոյության շրջանում աշխատավարձը բարձրացավ 10-40 տոկոս, ապա դյուդատնեսական մթերքների գները բարձրացան 67 տոկոս, իսկ բնակարանների գները՝ 70 տոկոս : Բանվորական որը լավագույն գեղքում տեղում եր 12 ժամ : Կնոջ աշխատանքը հետզհետե դուրս եր մղում տղամարդու աշխատանքը : «Ծայրահեղ շահագործումը և ցածր աշխատավարձը այլաւերեցին բանվոր դասակարգը և զարգացրեցին պոռնիկությունը : Պրոլետարի ընտանիքը քայլայվում եր» :

«Ոստովանում եմ,—գրում ե բուրժուական դիտնականներից մեկը բանվոր դասակարգի դրության մասին,—վոր իրականությունը գերազանցեց իմ ամենամռայլ յերկյուղները» :

Այդ պայմաններում արհեստանոցներում և գործարաններում անդորություն գոյություն ուներ միայն արտաքուստ : Սկսեց հանդես գալ բանվորների գժգոհությունը : 60-ական թվականների սկզբին, 1884 թվին հեղափոխության պարտությունից հետո առաջին անգամ բանվորական շարժումը կրկին սկսեց աշխուժական կառավարությունը, խարելով բանվորներին և նրանց կազմակերպելով թեկուղ իր հսկողությամբ, վորոշ չափով ինքն եր այդ աշխուժացման պատճառը : Անուամենայնիվ, Նապոլյոն III-ի կառավարության թակարդն եյին ընկնում միայն ամենաանդիտակից բանվորները :

Բանվորները գտնվում եյին ուսուցիչության Պրուդոնի ամենախիստ ազդեցության տակ, վորն արտահայտվում եր ժամանակի՝ մեծ մասամբ արհեստավորների շրջանից յելած, բանվորների հա-

յացքները։ Հատկապես բնակչության այդ խավերի շրջանում, մանր բուրժուական հոգեբանություն ունեցող մարդկանց, արհեստավորների մեջ ամենամեծ էնդինակություն եր վայելում պրուդոնիզմը, արհեստավորների, վորոնք շահագործվում ելին խոչոր, դվարապես առևմտրակոն կազինությունից միջոցով և դեռևս չելին կորցրել ինքնուրույն մանր անտեսատեր դառնալու հույսը։

Պրուդոնի հետեւղոների կամ մուտուալիստների հիմնական հայացքները՝ հետեւալին ելին. նրանք արտահայտվում ելին գործադույների դեմ («մենք ըսկովունքով ժխտում ենք գործադույները, վորովհետեւ նրանք ինեւացի անտեսական միջոց չեն հանդիսանում»)՝ զբում եր նրանցից մեկը), նրանք ժխտում ելին քաղաքական պայքարը, թշնամաբար ելին վերաբերվում կանանց մասնակցությանը. բանվորական կազմակերպություններին և սրատրաստվում ելին աշխատավորության զբությունը բարելավելու կազինության. հառարակության շրջանակներում՝ կազմակերպելով ժողովրդական քանկեր, կոռուպտիվներ և այլն։

Այդ ժամանակները, 1864 թ. արդեն առաջացավ միջազգային առաջին բանվորական կազմակերպությունը, վորին գլխավորում և ղեկավարում եր Կարլ Մարքսը։ Այդ քանիվորների միջազգային ընկերությունների կամ I ինտերնացիոնալը, վորը հիմնվեց ժամանակի անտեսապես ամենազարգացած յերկրների։ Անդիւայի և Ֆրանսիայի բանվորների նախաձեռնությամբ։

Վորքան վոր Փրանսիական բանվորական շարժման մեջ գերիշխում ելին պրուդոնիտները, այնքան նրանք իրենց կնիքն ելին թողնում նաև I ինտերնացիոնալի

Պրանսիական Փեղերացիայի գործունեյության վրա։ Այդ պատճառով Փրանսիական Փեղերացիան բանվորներին տարավ Պրուդոնի մատնամշված խաղաղ ձանապարհով՝ վարկի և կոռուպտիվի ուղիյով։

Այդ պատճառով Նապոլյոն III-ի կառավարությունը ներողամիտ վերաբերմունք եր ցույց տալիս ինտերնացիոնալի Փրանսիական սեկցիայի գործունեյության և այդ գործունեյությունը ընթանում եր հայտնապես։ Բայց յերբ ինեւրնացիոնալի համագումարներում պրուդոնիստները սկսեցին կրել պարտություն պարտության յիշեից և յերբ ինտերնացիոնալն արտահայտվեց հոգուու քաղաքական պայքարի անհրաժեշտության բանվոր դասակարգի համար, Փրանսիական կառավարության վերաբերմությը դեպի Ինտերնացիոնալի Փեղերացիան կտրականապես փոխվեց։ Ֆեղերացիայի վրա մի շարք հարձակումներ կատարվեցին։ Մեկը մյուսի հետեւ տեղի ունեցան յերկու դատավարություն, վորոնք վերջացան ինտերնացիոնալի անդամների բանարկությամբ։ Այդ դատավարությունները մի առժամանակ համարյա կատարելապես քայլքայեցին Փրանսիական Փեղերացիան։ Գոնե նրա ականավոր անդամներից մեկը I ինտերնացիոնալի III կոնգրեսում հայտարեց, վոր «Փրանսիական կազմակերպությունը» տապալված ե։

Փրանսիական ինտերնացիոնալիստների կեմ կատարված զաժան հալածանքը բացատրվում և նախ և առաջ այն յերկրությով, վոր Նապոլյոնի կառավարությունը կրում եր յերկրում անընդհատ աճող հեղափոխական շարժումից։ Հատկապես 60-ական թվականների յերրորդ կետին ավելի ու ավելի աճեց դժողոհությունը

կառավարական ոհմից և կառավարական քաղաքականությունից :

Այդ գժգոհությունը վերածվեց մի վորոշակի չարժման, վորը հետպհետեւ սկսեց կրել մասսայական բնույթ : «Սինդիկալիստական կազմակերպությունները, համքարային մարմինները և կոռպարատիվ ընկերությունները, վորոնք մինչեւ այդ համարյա չեյին հետաքրքրվում ինտերնացիոնալով, այժմ զործը վերցնում են իրենց ձեռքը և, չմիանալով նրան՝ սկսում են զործել նրա հետ միասին :

Դրա հետ միաժամանակ սկսեցին փոփոխվել բանափորների հայացքները : Նրանց մեջ Պրուդոնի հետ միասին սկսեց հեղինակություն վայելել հետափոխական-կոմունիստ թանիկին, վորն առաջարկում եր Եշիանությունը կրավել հեղափոխական ապստամբության միջոցով և հիմնել հեղափոխական փոքրամասնության դիկտատուրա : Բազմաթիվ տարիներ նա անցկացրեց բանտերում՝ զավադրություններ կազմակերպելու պատճառով : Ռուս հեղափոխական թակութիվի ուսմունքը, վոր քարոզում եր հեղափոխական ճանապարհով հեղաշրջում և անարխիա, նույնական սկսեց մեծ ազդեցություն գործել : Այժմ պրուդոնիստները սկսեցին փոփոխել իրենց հայացքները և նշանակելի չափով հակվել գեղի կողմիտիվիզմը կամ ինչպես այն ժամանակ սմավանում ելին՝ սոցիալիստական հայացքները :

60-ական թվականների վերջը նշանավոր դարձագարդյունաբարերական ճշնաժամով, վորը վատթարացրեց բանիորների վիճակը : Սկսվեցին գործադուլներ, վորոնց ստիպված ելին պաշտպանելու նույնիսկ պրուդոնիստները : Կրկին աշխուժացավ ինտերնացիոնալի գոր-

ծունեյությունը, վորի հեղինակությունը գնալով անօամբ եր :

Սակայն նրա հաջողությունները չափազանց անկայուն ելին, և այդ հանդամանքը գիտակցում ելին նրա ղեկավարները :

«Մենք հոգի յենք առանց մարմնի, զբում եր նըրանցից մեկը : Մենք պետք եւ պատրաստ լինենք այդ որվան (հեղափոխության որվան), —ասում եր մյուսը, —յեթե չենք ցանկանում մի ավելորդ անգամ մնալ, վորպես հիմարներ» :

#### ԿԱՅՍՏՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

«Այդ որը» մոտենում եր կառավարությունը նախազգալով իր մոտալուտ կրծանումը, զիջումներ նրանում հասարակության : Բացի պարլամենտական ուղղղեցիայից, վոր արտահայտում եր միջին բուրժուազիայի զանազան խմբակների շահերը, բացի հեղափոխական սոցիալիստական պրուդոնիստական հայացքներունեցող բանվորներից, զոյլություն ուներ նաև իր գրությունից գժգոհ մանր բուրժուազիա : Նրանց նըրկայացուցիչները հանրապետականներն ելին, վորոնք յերազում ելին վերադառնալ մանր բուրժուազիայի տիրապետության ժամանակներին, վոր գոյություն ուներ ֆրանսիական Մեծ Հեղափոխության և կոնվենտի դիկտատուրայի շրջանում : Գրության մեջ առաջացած փոփոխությունը նկատի չառնելով, զեղի հետ նայում այդ մարդիկ ցանկանում ելին հարություն տալ իրենցից 80 տարի առաջ կատարված հեղափոխության ձեփերին, մտածում ելին նրա մտքերով և խոսում նրա լեզվով՝ Կրեվակայելով իրենց Խոկական լակորիներ\*)

1) Յակոբիններ՝ Փրանսիական մեծ հեղափոխության ըջանի հեղափոխական մանր բուրժուազիայի կուսակցություն :

Սակայն կառավարության թշնամի բոլոր հոսանքների և խմբակների միջնվագ միամություն և համաձայնություն գոյություն չուներ: Միաձայնություն չկար վոչ պայքարի մեթոդների, վոչ և այն ինտիբների վերաբերմաբ, վորոնք պետք եր լուծել: Զկար մի կուսակցություն, վորն եր վրա վերցներ շարժման զեկալիարությունը: Նույնիսկ լ ինտերնացիոնալի Փետքերացիայի անդամների մեջ տիրում եր կարծիքների և հայացքների լիակատար քառու: Ամենակարելոր հարցի առթիվ՝ թե ինչ կարգեր պետք ե փոխարինեն գոյությունն ունեցող վարչածելը, կային ամենահակառական տեսակետներ:

Ինտերնացիոնալի Փրանսիական Փետքերացիայի ականավոր առաջնորդներից մեկը խոստովանում եր, վոր ամբողջ կազմակերպությունը բացարձակապես անպատճառ եր հեղափոխական յելույթի: «Մենք խոստովանեցինք, վոր պատրաստ չենք հեղափոխության, — զրում ենա: Մենք գտնում ենք, վոր մեղ անհրաժեշտ է մեկ, թերեւ յերկու տարի ակտիվ պրոպագանդայի համար»...

Սակայն այդպիսի ժամկետ չեր արված Փրանսիական հեղափոխականներին: Անցեքը հասումանում ելին և իրենց լուծման մոտենում բացառիկ արագությումք: Նապոլեոնի կառավարությունը մի շարք զեղանագիտական ամենածանր պարագին բացարձականության մեջ: Խախտված թագը պահպանելու համար 1870 թ. Նապոլեոնը պատերազմ սկսեց Պրուսիայի գեմ: Պատերազմը անհրաժեշտություն եր նրա համար: Նրա համար այդ միակ միջոցն եր, վորով նա կարող եր իր

դինաստիայի ձեռքում պահել Փրանսիական դաշը: «Այդ պատերազմն իմն ե, նա ինձ պետք ե», — ասում եր թագուհին՝ նրա կինը: Պատերազմի կարիք եյին զգում նաև բորսայական սպեկուլյանտները, վորոնց համար յերկրորդ կայսրությունն<sup>\*)</sup> իրենց կառավարությունն եր: Նրանք գտնում եյին, վոր բավական և մզել «վեցշաբաթյա ուազմական կամպանիա, վորպես զի աշխուժանա այն սպեկուլյացիան, վորով նրանք հարստանում եյին»: «Հարկ կլինի անախորժ բռպեներ ապրել, — ասում եյին նրանք, — գոհարերել ընդամենը մի 50.000 մարդ, վորից հետո հորիզոնը կպարզվի և դործերը կլերսկավեն»:

Բայց պատերազմը, վորի միջոցին Պրուսակայի հետ միասին հանդես յեկան գերմանիայի բոլոր պետությունները, ճակատագրական նշանակություն ունեցավ կայսրության համար: Կայսրությունը, չնայած եր կարծեցյալ հզորության, կարտե անակի նման մեծ արագությամք փուլ յեկալ: Մշտապես զենք ճոճող պետությունը կատարելապես անպատճառ գտնվեց պատերազմի հանդեպ: Ի վերջո, ինքը Նապոլեոն III-ը 70.000-անոց բանակով շրջապատվեց և գերի ընկավ պրուսացիների ձեռքը:

Այս անցքի հետեւանքով հեղաշրջում առաջացավ Փարբերությունը: Կառավարությունը տապարվեց, և Փրանսիան յերբորդ անդամ զարձավ հանրապետություն: Սակայն կրկին՝ ինչպես 1848 թ., նա դարձավ բուրժուական հանրապետություն: Իշխանության դլուխ անցավ բուրժուական չափավոր ոպպոկիցիան: Նա-

<sup>\*)</sup> Փրանսիայի պատմության մեջ այսպես ե կոչվում Նապոլեոն III-ի կայսրությունը և տարբերակվել նապոլեոն I-ի կայսրությունից:



իսրդ ճնշումներից կատարելապես ուժառապառ յեղած քանվորական և հեղափոխական կազմակերպությունները չկարողացան արգելք հանդիսանալ դրան։ Ինտերնացիոնալի Փեղերացիան միայն վերջերս եր ջախճախված յերրորդ դատավորությամբ, իսկ բանկիստները քայլացին եյին հեղաշրջման անհաջող փորձից հետո, վոր տեղի յեր ունեցել ընդամենը կես ամիս առաջ։ Հեղափոխականներն այնքան անպատճառ եյին, վոր նրանցից մեկը, լուր առնելով հեղաշրջման մասին, բացականչեց՝ «Մենք կորած ենք»։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԵՎԱՐՈՒԽԹՅՈՒՆԸ

Հեղաշրջման պատճառով կրկին իշխանության գուլուխ անցան բուրժուազիայի ներկայացուցիչները, վորոնք վախենում եյին մասսաներից, թշնամի եյին մասսաներին և կատաղի հակառակորդներ սոցիալիզմին։ Նույնիսկ նոր ժամանակավոր կառավարության անդամների մեջ ամենառադիկալ դամբեռտան քարոզում եր այնպիսի հանրապետություն, վորի հաստատումը «զուգորդվելու յե թշվառների գրության բարելավումով և նրանց բարոյական բարձրացումով՝ առանց վորեվե վնաս և վտանգ պատճառելու հարստություն և կրթություն ունեցողներին»։

Սակայն պատերազմը շարունակվում էր, բուրժուազիային այժմ վիճակից փրկել յերկիրը անշեղուրեն հարձակվող, դեպի Ֆրանսիայի մայրաքաղաքը մոտեցող պրուսացիներից։ Նրանք շուտով Փարիզը պաշրջացին։ Նոր կառավարությունը բարձրազոչ անուն կրում՝ «Ազգային պաշտպանության կառավարություն»։ Պաշտպանությունը համարյա այդ անունով ել

ուահանափակվեց, քանի վոր բուրժուական կառավարությունն ամենաչին ցանկություն իսկ չուներ իսկապես պայքարելու թշնամիների դեմ։

Պաշարված Փարիզում կանոնավոր զորքի բացակայության պատճառով կարիք զգացվեց զինել բանվորներին և արհեստավորներին և մայնել նրանց այսպես կոչված «Ազգային գվարդիայի», այսինքն՝ յերկրապահ զորքի շարքերը։ Յերկու հարյուր հազարանոց պրոլետարական այս բանակը շատ ամելի սարսափելի յեր նոր կառավարության համար, քան պրուսական բանակը։ Պրուսացիների նկատմամբ հաղթանակ տանել հնարավոր եր միայն այդ պրոլետարական—համբարային բանակի ողնությամբ, բայց այդպիսի հաղթանակը բուրժուազիայի համար կնշանակեր մասսաների, հեղափոխության հաղթանակ։ Այս է պատճառը, վոր ազգային պաշտպանության կառավարությունը դարձավ ազգային գավաճանության կառավարություն։ Հայրենասիրաբար տրամադրված փարիզցիներին սիրաշահելով այնպիսի բարձրագույն Փրազմերով, ինչպես «Վոչ մի թիզ հոզ, մեր ամրոցներից և վոչ մի քար թշնամուն», նա գաղանաբար բանակցություններ եր վարում պրուսացիների հետ և ամելիին՝ ազգային գվարդիայի անդամներին դիտավորյալ կերպով ուղարկում եր սպանվելու և պարտվելու։ Կառավարությունը հույս ուներ այդ պարտություններով թուլացնել պրոլետարական բանակի ուժը և հնազանդեցնել նրան։ «Յեթե մի մեծ ճակատամարտում, —ասում եր ժամանակավոր կառավարության անդամ գեներալ Տրոչյուն, —քսան հաղար հողի սպանվեն, Փարիզը կհանձնվի։ Ազգային գվարդիան այն ժամանակ միայն

կհամաձայնվի հաշտություն կնքել, յերբ նա կորցնի  
տոնվազն տաս հազար հոգի»:

Փարիղի բանվորներն ու արհեստավորները յերեք  
անդամ փորձեցին տապալել ազգային պաշտպանության  
կառավարությունը, բայց ամեն անդամ այդ փորձերն  
անհաջող անցան: Յերկրորդ ալյուտամբությունը կա-  
տարվեց այն ժամանակ, յերբ Փարիզում լուր ստաց-  
վեց, թե մարչալ Բաղենը հանձնվել է մեծ բանակով:  
Տապալված կայսեր կողմնակից այս գեներալը չեր-  
ցանկանում պաշտպանել հանրապետությունը և հանձ-  
նեց այն ամբողը, վորտեղ ինքը փակվել եր: Յերրորդ  
փորձը կատարվեց 1871 թ. հունվարին անհաջող մի  
վոռնձգության հետեւանքով, վոր կազմակերպել եր  
հրամանատարությունը, նպատակ ունենալով հարկա-  
դրել գվարդիային մեծ վնասներ կրելու: Այդ կատար-  
վեց գեներալ Տրոչույի խորհրդով:

Այդ բոլոր հեղափոխական փորձերի անհաջողու-  
թյան պատճառը վորեւե կազմակերպության բացա-  
կայությունն եր, վորը դեկավարեր մասսաներին, աշ-  
խատեր նրանց մեջ և վայելեր նրանց վստահությու-  
նը:

Դրանից հետո արգեն վոչ մի հանդամանք չեր խան-  
դարում կառավարության հաշտություն կնքելու պրու-  
սացիների հետ: Իշխանության գլուխ կանգնած բուր-  
ժուազիային անհրաժեշտ եր հանրավորության չափ  
չուտ անել այդ, քանի պատերազմը քաղաքացիականի  
չեր վերածվել և քանի դեռ բուրժուազիայի ձեռքումն  
եր գտնվում բանակը՝ այն միակ ուժը, վոր հետագա-  
յում կարող եր ոգտագործվել մասսաների նոր յե-  
լույթների ճնշման համար: Այդ միտքը չափազանց

հայտնապես արտահայտված եր հետեւյալ հեռագրում,  
վոր մարչալ Բաղենն ուղարկել է պրուսական թագա-  
վորին:

«Բաղմական վեճը վերջացած ե, — գրում էր  
քաջարի մարշալը, — և նորին մեծություն պրու-  
սական թագավորը չի կարող մեծ նշանակու-  
թյուն տալ այն անպատճ հաղթանակին, վոր նա  
ձեռք կրերի՝ խորտակելով մեր դժբախտ յերկրի  
ոնարիսիան վերացնելու ընդունակ միակ ուժը:  
Ես (այդ ուժը՝ բանակը) կվերականգներ կար-  
դը...»

Կառավարությունն այնքան չտալում եր հաշտու-  
թյուն կնքելու, վոր համաձայնվեց Ֆրանսիայի համար  
ամենասարուացուցիչ և ծանր պայմանների հետ: Ֆրան-  
սիական բուրժուազիան յերկրի ներքին «կարգը» գնեց  
շատ թանգ գնով՝ նա զրկվեց Ալգաս-Լոթարինդիայից  
(յերկաթով և ածխով հարուստ ըրջան) և օմիլիարդ վոս  
կաց, վորն այն ժամանակ մի աշուելի գումար եր: Խա-  
ղաղության այսուհետ պայմանների հետ համաձայնելը  
Փրանսիական բուրժուազիային մղեց ուրիշ քայլերի  
ուրիշ կարգը կազմակերպելու ուղղությամբ:

Հաշտություն կնքած բուրժուազիայի առաջ հարց  
սոսանցավ, թե ո՞ւմ հաշվին պետք ե կատարվեն իր  
սոսորագրած հաշտության պայմանները, այլ կերպ ա-  
սո՞ծ՝ ո՞ւմ վրա պետք ե ընկենն պատերազմի և ամո-  
թակարտ խաղաղության ծախսերը:

Բուրժուազիան նախ և առաջ չահագրգոված եր  
պատերազմի և հաշտության պայմանագրի կատարման  
բոլոր ծախսերը զնել ժողովրդական մասսաների վրա:  
Դրա համար անհրաժեշտ եր ամուր պահել իշխանու-

թյումն իրենց ձեռքում և ազատվել այն խոչընդոտից ,  
վորպիսին հանդիսանում եր Փարիզի զինված և Ազգա-  
յին գվարդիայի մեջ կազմակերպված պրոլետարիատ :

Փարիզի պրոլետարիատն ու արհեստավորները հե-  
րոսարար , տարան պաշարման բոլոր արհավիրքներն ու  
դժվարությունները : Նրանք քաղցի և սանամանիքի  
մեջ արիարար կռվում եյին պաշարված քաղաքի խրա-  
մատներում և հողապատնեշներում : Յեվ հանկարծ  
նրանք անսպասելի կերպով իմացան , վոր իրենց կրած  
բոլոր տանջանքներն ու զրկանքներն անտեղի եյին , վոր  
Ֆրանսիան պարտված և , ստորագրված են հաշտու-  
թյան խայտառակ պայմաններ և թշնամին ցնծում և :  
Նրանց դայրույթն անսահման եր :

Սակայն յեթե Փարիզի բանվորն ու արհեստավո-  
րը ցանկանում եյին պատերազմել , մտածելով , իհար-  
կե , հեղափոխական պատերազմի մասին , բուրժուա-  
զիան և դյուզացիությունը դեմ եյին այդ պատերազ-  
մին : Հաշտության պայմանագրով և այդ պայմանա-  
գրի հաստատման համար պետք եր հրավիրել Ազգային  
ժողով : Այդ հազմեապ հրավիրված ժողովին մասնակ-  
ցում եյին ուսակցիոններն ու հեղափոխության կա-  
տաղի թշնամիները , վորոնց այնտեղ եր ուղարկել պա-  
տերազմ չցանկացող դյուզացիությունը , (ինչպես և  
1848թ.) : Նրանք կրկին վախեցել եյին սոցիալիստնե-  
րի յելույթներից , վորոնց գյուղացիությունը նկարա-  
զրում եյին , վորպես հողի բաժանման կողմնակիցների :  
Ազգային ժողովը գիտավորյալ կերպով հրավիրվեց  
կարծ ժամանակամիջոցում , իսկ այդ հանդամանքը՝  
հաղորդակցության միջոցների քայլայման , թշնամու  
կողմից յերկրի մի գգալի մասի բռնագրավման պայ-

մաններում զրկում եր առաջավոր տարրերին ընտրու-  
թյունների համար վորեվե կերպ պատրաստվելու ,  
նախընտրական ագիտացիայի և կաղմակերպված յե-  
լույթ կատարելու հնարավորությունից : Մեծ մասսամբ  
դրանով և բացատրվում նոր ժողովի հակահեղափոխա-  
կան կազմը :

Իեակցիոն «ռամիկների» այդ ժողովն առաջին հեր-  
թին «գործադիր իշխանության պարագլուխ» ընտրեց  
դեպի հեղափոխությունն ունեցած իր ատելությամբ  
հայտնի Տիերին՝ «այդ թզուկ-հրեցին ,—ինչպես նրան  
բնորոշում ե Մարքոս ,—վորն ավելի , քան կես դար  
կախարդել եր ֆրանսիական բուրժուազիային , վորով-  
հետեւ նա ինքնին հանդիսանում եր բուրժուազիայի  
դասակարգային ապականության վրակատար , իդեա-  
լական արահայտությունը» :

«Ռամիկների» ժողովն այնքան վախենում եր Փա-  
րիզի բանվորական ժամանակից , վոր համարձակություն  
չունեցավ նիստերը զումարելու Փարիզում ,—վորը  
չոչակված եր իր հեղափոխական տրաղիցիաներով ,—  
այլ դումարվեց Բորդոյում : Հենց այդ արդեն փոքր  
անպատճեն չեր մայրաքաղաքի ազգաբնակչու-  
թյան համար :

Հետագայում ժողովը սկսեց վարել փարիզացիներին  
սիստեմատիկ պրովակացիայի յենթարկելու քաղաքա-  
կանություն :

Ժողովն առաջին հերթին չափազանց աներկմիտ  
կերպով իրեն ցուցարեեց , վորպես կառավարման  
հանրապետական ձեվին հակառակորդ և սկսեց ժամա-  
նակ առ ժամանակ խոսել այն մասին , վոր Փարիզից  
պետք ե խլել մայրաքաղաքի կոչումը : Այնուհետեւ նա

ամենառեակցիոն զեներալներին նշանակեց Փարիզի նահանգապետի և Աղքաղյուն գվարդիայի հրամատարի պաշտոններում :

Բոլոր լրազրերը յենթարկվեցին հարկաման, վորով փաստորեն սահմանափակվեց մամուլի աղասությունը: Վերջին հեղաշրջման անհաջող փորձերի մասնակիցներ Բլանկին և Ֆլյուրանուը դատապարտվեցին մահվան:

Այսուհետեւ ժողովի ռեակցիոնները վորոչեցին փարիզցիներին հարված հասցնել նյութական շահերի կողմից: Փարիզում տիրող գործազրկության պայմաններում բանվորների և արհեստավորների համար գորոշյան միակ միջոցը Ազգային գվարդիայում ծառայելու դիմաց ստացած որապահիկն եր: Այդ միջոցը այժմ խթեցին նրանցից: Սակայն այդ դեռ քիչ է: Մայրաքաղաքի պաշարման ժամանակ հաստատված այն կարգը, վորով յերկարացված եր բնակարանավարձի և մուրհակների հատուցման ժամկետը, անսպասելի կերպով վերացվեց, և բուրքուագրիան անողոք ու անդրդիմով վերաբերություն հաշիվներ ներկայացրեց բանվորներ, արդի կերպով հաշիվներ ներկայացրեց բանվորներին, արհեստավորներին, մանր խանութպաննին և արհեստանոցի տիրոջ: Բոլոր այդ պրովարկացիոն հարձակումները փարիզցիները հանդուրժեցին ատամները ողմած և պայրութիր թագցնելով:

### ՄԱՐՏԻ 18-Ի ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Այսպիս զայրացած, բայց լուս Փարիզը զերծ մնում էր, վորպես Ազգային ժողովի բուրքուատների և կարգածատերերի ահարկու և վտանգավոր թշնամին: Այդ պատճառով Տիերը մարտի 18-ին հուսահատ փորձ

կատարեց լսելու վարիզցիների վենքը, այսինքն՝ ցանկացավ Փարիզից տանել այն թնդանոթները, վոր գընվել ելին փարիզցիների հավաքած փողով: Այդ թնդանոթները, նույնիսկ պրուսսացիների հետ կնքած պարմանագրով հանձնված ելին Ազգային գվարդիային և հանդիսանում էլին նրա սեփականությունը: Այդ վարժունքը Փարիզը հանդուրժել չկարողացավ և, ի պատճառին Տիերը և ժողովի նոր վոտնագության, մեկ մարդու նման վոտքի կանգնեց: Թնդանոթները մնացին փարիզցիներին, և այդ ապատամբությամբ հիմք դրվեց Փարիզի Կոմունային:

1871 թ. մարտի 18-ի առավոտյան Փարիզն արթնացավ «կեցցե Կոմունան» վորոտներուստ բացականչություններով: Ո՞վ կարող եր ամենից առաջ հանդես գալ, վորպես նրա ստեղծողն ու կազմակերպողը: Ի՞նչ եր ներկայացնում իրենից այդ Կոմունան:

1871 թ. վետրվարին կազմվեց Ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտե: Այդ կոմիտեն մի տեսակ հանդիսանում եր Ազգային գվարդիայի գասակարգային կազմի արտացոլումը: Վորքան վոր Ազգային գվարդիայի զիխավոր մասը կազմված եր բանվորներից և արհեստավարներից, այնքան նրա այդ կազմն արտացոլում եր Կենտրոնական կոմիտեյում: Յեվ քանի վոր բանվորական-համքարային մասսայի տրամադրությունը նշանակելի չափով անորոշ սոցիալիստական եր, ապա Կենտրոնական կոմիտեյի մեջ անցան սոցիալիստներ:

Կենտրոնական կոմիտեն կոնտակա գործակցություն մեջ մտավ և ինտերնացիոնալի Փեղերացիայի հետ և նույնիսկ սկսեց ժողովներ գործարել նրա հետ մեկ ընդ-

Հանուր շենքում : Իսկ ի՞նչ գեր եր խաղում ինտերնացիոնալը ծավալվող անցքերի մեջ և ինչո՞ւ նա իր վրա չվերցրեց այդ անցքերի ղեկավարությունը :

Մարքսը ժամանակին հաշվի առնելով Փրանսիա-կան բանվորական շարժման թուլությունն ու մեկու-սացած վիճակը, ինչպես և շրջակա իրադրությունների բարդությունը, Նապոլյոն III-ի անկումից անմիջապես հետո ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի անունից գրում ե. «... Կատարյալ անմտություն կիներ իսկա-կան ճզնափամի պայմաններում տապալել նոր կառա-վարությունը...» Բայց յերբ ծավալվեցին ահարկու անցքերը, Մարքսը Կոմունայի հանդեպ բռնեց մի դիրք, վորը հատուկ ե իսկական հեղափոխականին: Նա ըլ-վհատվեց մենչեվիկ Պլեխանովի նման, վորը 1905 թ. ասում եր, թե «Պետք չեր զենքի դիմել»: Նա ձեռները չլվաց և մի կողմ չկանգնեց, այլ եր վրա և Դիմավոր Խորհրդի վրա վերցրեց կատարվող անցքերի ամբողջ պատասխանատվությունը: Դրան ապացուց ե Մարքսի գրչին պատկանող մի փայլուն դոկումենտ, վորը հրա-տարակված է ինտերնացիոնալի Խորհրդի անունից և կոչվում է. «Բանվորների միջազգային ընկերության Գլխավոր Խորհրդի կոչը Ֆրանսիայի քաղաքացիական պատերազմի առթիվ»:

Բացի դրանից, Մարքսը վորքան կարող եր աշխատում եր ողնել կոմունարներին և հնարակորության սահմաններում զեկավարել նրանց։ Պահպանվել են բանագիտական ուղղված կոմունայի յերկու խոչոր կործիչներին՝ Վարդենին և Ֆրանկլինն, վորը բովանդակում է զեկավար նշանակություն ունեցող ցուցումներ։ Այդ նամակում Մարքսը դրում է, վոր կոմունայի մասին նա

դրեւ ե «մի քանի հարյուր նամակ աշխարհի բոլոր ծայրերը»...

ինչ վերաբերում և Փրանսիական ինտերնացիոնալիստներին, ապա նրանք հետագայում ևս, յերբ դրություն բավականաշատ փոխվեց, առանց հաշվի առնելու այդ փոփոխությունները, դեռևս գտնում ենքն, վոր «ինտերնացիոնալը . . . չպետք է ուղղակի միջամտի անցքերին, վորոնք գերաւաս բավականաշատ անվատահելի յեն, և վորանց միջնա կարող ե արատապորել իր անունը»: Ինտերնացիոնալի վորոշ անդամներ գտնում ենին, վոր ինտերնացոինալը Փրանսիայում բավական թույլ է, վորպեսզի խառնվի տեղի ունեցող անցքերն են:

«Լոնգունում, —ասում եր ականավոր ինտերնացիոնալիստներից՝ մեկը, —ինտերնացիոնալը առաջնակարգ քաղաքական ուժ է: Թող սոցիալիստական շարժումը բրնձի Անդլիայում—ինտերնացիոնալը պատրաստ է դրան: Բայց այդպես և արդյոք գրությունը ֆրանսիայում»: Ինտերնացիոնալի ֆրանսիական կազմակերպությունը վարչական հետու մնալ ծափակիող անցքերից:

Ճիշտ է, անցքերի ընթացքը կատարեց իր գործը.  
Ինտերնացիոնալի անդամները մտան Կոմունայի մեջ՝  
նրանում զեկավար պաշտոններ գրավեցին, պատասխա-  
նատվություն վերցրեցին իրենց վրա կատարվող անց-  
քերի համար և հետազայում մյուսներին հավասար գոհ  
դարձան զահիճներին և «կարգը» վերականգնողներին:

Սակայն սկզբնական շրջանում կատարվող անցքերի դեկապարման ամբողջ ծանրությունն ընկալ Ազգային Գվարդիայի կենտրոնական Կոմիտեյի վրա : Իր արյամբ և մարմուկ Հանդիսանալով Փարթիղի արհեստա-

վոր-բանվոր մասսայի ծնունդը և կազմված լինելով  
այդ մասսայի շարքային ներկայացուցիչներից, Կոմիտեն  
ամբողջովովին արտահայտում եր նրա տեսակետներն  
ու Հայացքները: Սակայն մի խոշոր ռւժ հանդիսանա-  
լով, նա չեր ըմբռնում, վոր անցքերը ճակատագրական  
ընթացքով տանում են դեպի յերկու դասակարգերի  
ընդհարումը: Հեղաշրջումից ընդամենը 8 որ առաջ Ար-  
դային գվարդիայի առանձին զորամասերի պատվիրակ-  
ների ժողովում հնչում ելին այսպիսի խոսքեր: «Ամե-  
նից քիչ մենք կուպեյինք քաղաքացիների ցամալի և  
արյունահեղ ընդհարումներ միմյանց հետ»: Մինչդեռ  
այդ ընդհարումները դարձան կատարելապես անխու-  
ստիելի:

Կոմիտեն չեկավարեց մարտի 18-ի հեղաշրջումը:  
Հեղաշրջումը նախապատրաստել ելին պաշարման պայ-  
մանները և հետագա շրջանի բոլոր հանդամանները,  
և այդ պատճառով տեղի ունեցավ կատարելապես տա-  
րերայնորեն: Յերբ հեղաշրջումն արդեն կատարված եր,  
յերբ կառավարությունն ու կառավարական զորքը փա-  
խան Փարիզից, իշխանությունը պետք և անցներ այն  
միակ կազմակերպությանը, վոր հեղինակություն եր  
վայելում աշխատավորության մեջ և վորոշ չափով  
դրական հանձնարարական եր տվել իր համար, այ-  
սինքն՝ հատկապես Աղդային գվարդիայի կենտրոնա-  
կան Կոմիտեյին:

Անցքերին մասնակցողներից մեկն այսպես և բնո-  
րոշում այդ նոր ժամանակավոր կառավարությունը.

«Բազաքավետարանում ժողովի յեր նատեր  
անանուն կառավարությունը՝ կազմված համա-  
րյա բացառապես հասարակ բանկուների և մանր

պաշտոնյաներից, վորոնց յերեք քառորդի ա-  
նունն անծանոթ եր իրենց փողոցից կամ արհես-  
տանոցից այն կողմէ: Տրադիցիան խորտակվեց,  
տեղի ունեցավ մի ինչ վոր անսպասելի բան,  
կառավարության մեջ և վոչ մի ներկայացուցիչ  
չկար իշխող դասակարգերից, բոնկից հեղա-  
փոխություն, վորը չեր նախատեսել վոչ մի  
փաստաբան, վոչ մի ժուրնալիստ և վոչ մի գե-  
ներալ: Նրանց տեղը գրավեցին սեվադործ բան-  
վորը, կազմաբարը, խոհաբարը»:

#### ԿՈՄԻՈՒՆԱՅԻ ՀԻՉԱԿՈՒՄԸ

Իշխանության դլուխ անցած կոմիտեն, վոր կազմ-  
ված եր Փարիզի աշխատավոր մասսայի շարքային ներ-  
կայացուցիչներից, վորոշեց իրականացնել մասսաների  
պահանջը և ստեղծել նրանց ցանկալի կոմունան: Կենտ-  
րոնական կոմիտեն ամբողջովովին կանգնած եր դեմո-  
կրատական տեսակետի վրա, և Կոմունայի միտքն ո-  
տար եր նրան, վորպես գասակարգային կառավարու-  
թյուն: Ընդհակառակը, կոմիտեն այն կարծիքին եր,  
վոր ինչքան բնակչության մեջ մասը քվեարկի հոգուտ  
կոմունայի, այնքան ավելի ամուր և հեղինակավոր  
կլինի այդ նոր կառավարությունը:

Այդ և պատճառը, վոր Կենտրոնական կոմիտեն  
փորձում եր համաձայնության գալ վոչ միայն քաղ-  
քենիական մանր բուրժուազիայի մեջ հեղինակություն  
ունեցող խմբակների և կազմակերպությունների հետ,  
ոյլու ուղղակի ժամանակավոր կառավարության հա-  
կահեղափոխական կամակատարների Փարիզի տասն-  
մինչընթացից գրչանների քաղաքավետերի հետ:

«Մենք մեծ քանակությամբ ձայներ կհավաքենք, թե վոչ, այդ հանգամանքից շատ բան է կախված։ Յեթև մեզ միանան պատղամավորներն<sup>1)</sup> ու քաղաքագլուխները, ապա ամբողջ Փարփառ կղիմի դեսպի ընտրական քիւտառութերը»։ «Յեթև մենք ցանկանում ենք մեր յետելից տանել Թրանսիան, մենք նրան չպետք է վախեցնենք»։

Արդպիսի նկատառութներով՝ զեկավարվելով, կենտրոնական կոմիտեն լարում եր իր բոլոր ջանքերը՝ բուժուազիայի ներկայացուցիչների հետ ընդհարվելու համար, բայց այդ պես է հետ եր ցանկանալ, քան դրան հասնել։ Պատղամավորներն ու քաղաքագլուխները կենտրոնական կոմիտեյի վրա նայում ենին, վորպես ապօրինի կառավարության, վորպես իշխանությունը հափշտակողների։ Վերջին հաշվով՝ այդ բոլոր բանակցություններից վոչինչ դուրս չեկավ, բացի նրանից, վոր Տիերը ժամանակ շահեց և ժողովը փոխութեց վերալ (Փարփառ մոտ)։ Բնդհակառակը, Փարփառ թշնամիներն այնքան համարձակացան, վոր դիմեցին զինված հարձակման և միայն այդ հարձակման անհաջողությունից հետո քաղաքագլուխները ստորադրեցին կոմունայի ընտրությունների վերաբերյալ կոչը, այն ել յենթարկվելով վերսալից ստացած հրահնգին, վորը նովատակ ուներ յերկարացնել բնդհարման բոպեն։

Այդ ընտրություններին՝ մասնակցեցին 230.000

1) Այստեղ նկատի յեն առնված հականեղափոխական Ազգային ժողովին Փարփառ ուղարկված պատղամավորները։ Նրանցից շատերն անցնելով ուեակցիայի բանակը դավաճանեցին փարփառիներին։

մարդ, կոմունայի խորհրդի մեջ ընտրվեցին 90 հոգի և 1871 թ. մարտի 28-ին կոմունան հոչակվեց պաշտոնապես։

Դեմոկրատորեն ընտրված կոմունայի Խորհրդը պլուխտարական կազմ՝ չուներ։ Նրա մեջ բանվորները 32,2 տոկոս ավել չեյին, 15 տոկ. ավել մանր պաշտոնյաներ եյին, մոտ 5 տոկ. մանր ձեռնարկատեր ու առկվարականներ և 39 տոկ. ազատ արհեստի մարդեկ։

Ինչ վերաբերում է կոմունայի Խորհրդի անդամների տեսակետներին և հայացքներին, ապա նրանց մեջ մենք կդանեյինք և՝ տարբեր յերանդի պրուղութներ՝ ամենաչափավորներից մինչև չափազանց հեղափոխականները, Բակունինի ազդեցության տակ դանվող մարդեկ, Բյանկիի հետելորդներ և պարզ դեմոկրատներ։

Կոմունայի Խորհրդի անդամների մեջ կային նաև 16 ինտերնացիոնալիստներ, վորոնք մեծ մասամբ համամիտ եյին պրուղութներին։

Խորհրդի ընտրությունների ժամանակ կրկին աչքի ընկալ այն ժամանակված բանվորական շարժման մեծադրույն գյուղախտությունը, այսինքն՝ զեկավար, մասսաների հեղինակությունը վայելող կուսակցության բացակայությունը, վորն ունենար ջգրիտ և հատուկ ծրագիր և գործողության պլան։

Կոմունայի, այդ հեղափոխական նոր կառավարության մեջ ընկած մարդեկ քնավ չեյին ըմբռնում այն դերը, վոր նրանց վիճակված եր կատարել։ Կոմունայի անդամները չարունակում եյին զատողություններ անել ընդհանուրի շահերը պաշտպանելու անհրաժեշտու-

թյան մասին և խուսափում ելին դասակարգացին քո-  
ղաքականությունից :

«Առանձնապես մի՛ մոռացեք, — զբում եր  
յամպնակի ամենահեղինակավոր լրագրերից մե-  
կը, — վոր այնպիսի մի քաղաքի բնակչություն,  
վորակիսին Փարիզն ե, կազմված և բազմազան  
տարրերից : Արդարամիտ յեղեք բոլոր դասա-  
կարգերի վերաբերմամբ, պաշտպանեցեք բոլորի  
շահերը» : «Դաշինք պետք և գոյություն ունենա  
կապիտալիստների և աշխատավորների միջեկ, —  
զբում եր Կոմունայի անդամներից մեկի ձեռքով  
խմբագրվող նույն լրագրերը, — բայց այնպիսի  
դաշինք, վոր առաջիններին յեկամուտի առյուծի  
բաժինը չհասնի» :

Կոմունայի կառավարական լրագիրը մարտի 30-ին  
այն միտքն եր Հայտնում, թե «դասակարգերի հակա-  
ղությունն այժմ արդեն գոյություն չունի» :

Համերաշխության մասին գամողություններ եր  
անում նաև ինտերնացիոնալի Փեղերացիան .

«Համերաշխության բացակայությունը, —  
զրկած և նրա թուուցիկներից մեկում, — ընդհա-  
նուր քայլայում առաջացրեց, ակիզիր դնելով քա-  
ղաքացիական պատերազմին : Միայն ապահովե-  
րով ազատությունը, հավասարությունն ու հա-  
մերաշխությունը՝ կարելի յե ձգտել կարգերի  
ամրացման նոր հիմունքներով և աշխատանքի  
նոր կազմակերպման» . . .

Այդ բոլորն ի, հարկե, համաձայնողական, մանր  
բուրժուական պատրաստներ ելին, վորոնց փոխարեն

բանվոր դասակարգը դաժան հաշվետեսի պետք է յեն-  
թարկվեր :

Թե սոցիալական և թե հայացքների տեսակե-  
մից իր կազմով խայտարձեա Կոմունան ամերիկակա-  
յելի ծանր պայմաններում դժվարագույն ինդիբներ  
կենապործեց : Մանր պաշտոնյանները, ժուրնալիստնե-  
րըն ու արձեստավորները կանգնել ելին պետական մե-  
քենայի առաջ և այդ բարդ մեխանիզմը գործի ելին  
դնում առանց մասնակետների խորհրդի, ցուցումների  
և ոգնության : Բարձր պաշտոնյանները նենդադուլ անե-  
լով լքում ելին գործը և փախչում Տիերի ու Ժողովի  
հովանու տակ, բոլոր հիմնարկներում թողնելով միայն  
ստորին ծառայողներին : Նենդադուլ եր անում վոչ մի-  
այն բարձր պաշտոնյայությունը, այլև ինտելիգենցիան :  
Բժիշկներն ու պաշտանատար անձինք լքում ելին հե-  
վանդանոցները, թշչական զպրոցի պրոֆեսորները  
դադարեցրին դասախոսությունները : Պաշտոնյանները  
լքեցին նաև փոստը և Փարիզը կարմից ամբողջ աշ-  
խարհից :

Կոմունան բոլոր հիմնարկություններում նշանակեց  
պատվիրակներ, վորոնք չառ հաճախ լինում ելին հա-  
սարակ բանվորներ և կարողանում ելին իրենց յեռան-  
դով, անկաշու բնավորությամբ, գործին նվիրվածու-  
թյամբ կարգի բերել և գործի դնել պետական մեքենան,  
վերստին կյանք տալ համաշխարհային քաղաքին : Փո-  
րագրիչ թեյուը վերականգնեց փոստի գործունեյությու-  
նը, հյուսն Պենդին կարգի բերեց ազգային տպարանի  
աշխատանքը, վոսկերիչ բանվոր Մըենկելը աշխատան-  
քի և փոխանակության կարելորագույն Հանձնաժողո-  
վի գլուխն անցավ :

Փարիզի Կոմունան — 2

Կոմունայի որերին Փարիզում ապրող ոռուս հեղաշ  
փոխական Լայբովին ասում է, թե

«...Վորաբես ընդարձակ քաղաքի ագմինիս-  
տրատորներ և կառավարման գործի կազմակեր-  
պիչներ, Փարիզի պրոլետարիատի ներկայացու-  
ցիչները վոչ միայն վատ չելին, այլ թերևս ա-  
վելի լավ չելին, քան սովորական չինովնիկական  
ճահճի ներկայացուցիչները։ Պրակտիկ հնարի-  
մացությունը, յեռանդն ու հասարակությանն  
ոգուտ պատճառելու անկեղծ ցանկությունը հաղ-  
թանակեցին այստեղ բոլոր խոչընդուները»։

Կոմունան կառավարման գործը կազմակերպեց կա-  
տարելապես նոր, մինչ այդ չկերառված սկզբունքնե-  
րով։ Ամբողջ իշխանությունը կենտրոնացված եր ընտ-  
րովի ներկայացուցիչների ձեռքում, և այսպիսով իշ-  
խանության բաժանումը գործադիր և որենսդիր բա-  
ժինների, վորով այնքան պարծենում են բուրժուական  
սահմանադրություն կազմովները և վորը գործնակա-  
նում միայն հակայական չափերով ուժեղացնում ե գոր-  
ծադիր իշխանությունը, Փարիզի Կոմունայում գոր-  
թյուն չուներ։

Կառավարման դանազան ասպարեները զեկովա-  
րելու համար կոմունան իր միջից ընտրեց 10 հանձնա-  
ժողով՝ յարագանչյուրը կազմված 5-8 հոգուց։ Այդ  
բոլոր հանձնաժողովների գործունեյությունը պետք է  
համախմբվեր և համաձայնեցվեր 7 հոգուց բաղկացած  
Գործադիր հանձնաժողովի հետ։

Բոլոր պաշտոնատար անձինք վորոշ ժամանակա-  
միջոցում պետք է բարենարկեցին և վերընտրվեցին։ Աշ-  
խատավարձի ամենաբարձր դրույքը հավասարեցված

եր վորակյալ բանվորի ոռճիկին և սահմանված տարե-  
կան 6000 ֆրանկ (մոտ 2.300 ոռուք.)։

### ԿՈՄՈՒՆԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոմունան վերացրեց մշտական բանակը և միակ  
զինված ուժ հայտարարեց Ազգային գվարդիան։ Այդ  
նոր բանակում արտոնյալ սպայությունը տեղ չուներ,  
այլ պատճառով Ազգային գվարդիայի կենտրոնական  
կոմիտեն Հրամայեց հրամանատարական կազմի ընտ-  
րություններ կատարել այն գումարտակներում, ուր  
այդպիսի ընտրություններ չելին կատարված։ Գենե-  
րալի աստիճանը վերացվեց, վորաբես «անհամատեղե-  
մություն» Ազգային գվարդիայի գեմոկրատական կազմակերպ-  
ման հետ։

Կոմունան ձեռնարկեց դատարանի ոեֆորմին՝ վեր-  
ջնիս հիմքը դարձնելով դատավորների ընտրական  
սիստեմը, ատենակալների մանակցությունը և պաշտ-  
պանության արատությունը։ Կոմունան յեկեղեցին բա-  
ժանեց պետությունից, դադարեցրեց պետական մի-  
ջոցների հատկացումը կուլտին, ազգային սեփականու-  
թյուն հայտարարեց ամբողջ յեկեղեցական գույքը և  
Կարողներից վատարեց կրոնական սիմվոլները։

Կոմունան նմանապես սկսեց դպրոցական գործի  
ոեֆորմը՝ մեծ ուշազբություն դարձնելով նախնական  
կրթության։ Կոմունան վերջ դրեց հոգեորականության  
ազգեցությանը դպրոցում և հոչակեց պարտադիր, աշ-  
խարհական և ձրի կրթության սկզբունքը։ Կոմունան  
սովիթ ունեցավ հանդիպելու ուսուցիչների սաբուտա-  
ժին, վորսնք մեծ մասամբ հոգեորականներ ելին, այդ  
պատճառով նա պիտի և նորից նոր կառուցել կրթո-

կան գործի ամբողջ շենքը, ուսուցչական կազմեր պատրաստեր, մտածեր դասավանդման մեթոդների մասին, վորի համար ստեղծվեց հասուլ հանձնաժողով։ Ֆողովրդական կրթության գործով զրազվելով, կոմունարները մոռեցան աշխատանքային դպրոցի և դասավանդման ու արտադրության միջև կազ հաստատելու մըսթին։

Կոմունայի առաջին ակտերից մեկը Հանդիսացավ Վերալի գոհերին ոգնելը։

Ազգային գվարդիայի տուժած գինվորներին, ինչպես և կովում ընկած գվարդիականների ընտանիքներին պետք և արվեր կենսաթոշակ, ընդ վորում Ազգային գվարդիայի գինվորի կոնց ու յերեխային կենսաթոշակ նշանակվում եր անկախ այն հանգամանքից, թե կինը պաշտոնապես պատկան տուժած գվարդիականի հետ, թե վոչ։

Տնտեսական կյանքի ասպարիզում Կոմունան շատ քիչ ձեռնարկումներ կատարեց։

«Այս հարցում իրենց ազգեցությունն ունեցան վոչ միայն ժամանակի սղությունը, այլ և Կոմունայի մանր բուրժուական կազմը, ոսցիալիզմի և բանվորական չարժման ցածր մակարդակը, վորոնք չկարողացան առաջարի հասարակական հարաբերությունների հեղաշրջման ընդարձակ և կուռ ծրագիր»—ասում է Կոմունայի պատմաբաններից մեկը։

Հերազի, ի՞նչ եյին գրում ժամանակակից մամուլում սոցիալիստական ձեռնարկումների հարցի առթիվ։

«Քաղաքացիներ և գյուղացիներ, —գրում ե լրագրուերից մեկը, —համարացած յեղիք, վոր

հարցը ձեր նվաճումների պաղից ձեզ զրկելը չե։ Դուք որինական ձանապարհով տիրում եք ձեր քրափնքով ձևոք բերած գույքին։ Այլ մենք այժմ պահանջում ենք մեր իրավունքները, ինչպես դուք մի ժամանակ տիրացաք ձերին։ Բանն այն չե, վոր մենք զրավենք ձեր տեղը, այլ այն, վոր մենք մեր իրավունքը ստանանք ձերի կողքին։ Մենք կարող ենք ընթանալ դուզահեռաբար... մենք կզնանք խաղաղ ձանապարհով, առաջին չերթին գործելով համոգելու միջոցով, ապա հենվելով որևէքի վրա՝ մենք կդիմենք զեօպի տնտեսական հաշվեկարի վերացնություն և զեպի սոցիալական լիկվիդացիան»։

Յեթե մենք գրան ավելացնենք համերաշխության փերաբերյալ այն խոսակցությունները, վորոնք ժամանակին ընդհանրացած բնույթ են կրել, ապա կհասկանանք, վոր Կոմունան չեր կարող վճռական քաղաքականություն վարել սոցիալական ձեռնարկումների առարկում։ Բնդհակառակը, նա չափազանց լծախնդիր եր մասնավոր սեփականության վերաբերմանը։ Ի հարկե, այդպես ել պետք և լիներ մանք բուրժուազիայի կամ ինտելիգենցիայի ծոցից զուրս յեկած այն մարդկանց գործունեյությունը, վորոնք մհծամանություն եյին կարմում Կոմունայի կառավարության մեջ։

Այլ պատճառով, նույնիսկ տերերի կողմից լքված ձեռնարկությունները Կոմունան վճռականություն չունեցավ բնագրագիւր, այլ միայն հանձնեց բանվորական լնկերություններին այն պայմանով, վոր տերերի գերադասնալուց հետո նրանց համապատասխան չափով հատուցեն։ Սակայն այդ դեկբերը, չնայած սկզբուն-

Քորեն բարվականաչափ վճռական չեր, այսուամենայնիվ հսկայական նշանակություն ունեցավ:

«Նկատի ունենալով, —առված և այդ գեկ-  
րետում, —վոր բազմաթիվ արհեստանոցներ լըք-  
ված են իրենց տերերի կողմից, վորոնք չեն ցան-  
կացել կատարել իրենց քաղաքացիական պարտա-  
կանությունները և հաշվի նստել մյուսների շա-  
հերի հետ, վորի հետևանքով քաղաքի կյանքի  
համար չափազանց կարելոր նշանակություն ու-  
նեցող բազմաթիվ ձեռնարկություններ կանգ են  
առել, իսկ դրանով խախտվել են նաև բանվորների  
բարեկեցությունը, Կոմունան վորոշում և վոր  
բանվորական կաղմակերպություններից կազմ-  
ված հանձնաժողովը գեկուցում ներկայացնի այն  
սպառակտիկ միջոցների մասին, վորոնց ողնու-  
թյամբ կարելի լինի անմիջապես գործի դնել այդ  
արհեստանոցները, բայց արդեն վոչ թէ դասալիք  
տերերի, այլ նրանց ձեռնարկությունների բան-  
վորության կոռապերատիվ ասոցիացիայի ուժե-  
ռով»:

Պաշարման և դրանից հետո յեկող ժամանակամի-  
ջոցում Փարիզի չքավորությունը սարսափելի զրկանք-  
ներ կրելով, փոխատու դրամարկղները մտցրեց այն ա-  
մենը, ինչ հնարավոր եր գրավ դնել: Այդ պատճառով  
Կոմունան վորոշում հանեց վերադարձնել այն բալոր  
գրավ դրված առարկաները, վորոնց արժեքը վորոշ գու-  
մարից ցածր է: Քանի վոր Փարիզի չքավորության և  
մասր բուրժուազիայի պարտքերը չափազանց շատ ելին,  
Կոմունան սառնասիրու չկարողացավ մնալ այդ յերե-  
վույթի հանգեց: Նա՝ բոլոր վճարումները հետաձգեց  
յերեք տարով:

Կոմունայի բանվորական քաղաքականությունն  
ուղղություն եր սահանում և կենսագործվում աշխա-  
տանքի և փոխանակարգային հանձնաժողովի միջոցով,  
վորը համարյա ամբողջովին կազմված եր Ինտերնացիո-  
նալի անդամ բանվորներից: Վորքան վոր նրանց մե-  
ծամասնությունն իր հայացքներով պրուղոնիստ եր,  
այնքան և պրուղոնիտմի աղդեցությունը շատ խիստ  
չափով արտահայտվում եր հանձնաժողովի աշխա-  
տանքների վրա: Այդ աղդեցությունն արտահայտվում  
եր հանձնաժողովի խնդիրների համեստության մեջ,  
վորոնք հետևեալն են. «Ուսումնասիրել բանվորների և  
ձեռնարկատերերի միջև յեղած հարաբերությունների  
բոլոր ձեերը, վերաքննել այն տրենքները, վորոնք վե-  
րաբերում են առեւտին, վերաքննել մաքսային դրույք-  
ները, վերակազմության յենթարկել հարկերը և կազ-  
մակերաբել աշխատանքի վիճակագրություն»:

Այդ հանձնաժողովի կատարած ծառայություննե-  
րից մեկն եր աշխատանքի պաշտպանության վերաբե-  
րաւ բոլոր դեկրետների հրատարակումը: Կոմունան ա-  
ռաջին հերթին դեկրետ հրատարակեց հացի փոերի գե-  
շերային աշխատանքը վերացնելու մասին: Այդ դեկրե-  
տը հանդիսանում եր հրաւակակառների միության հա-  
մար և վաղուց առաջարկված պահանջների պատասխա-  
նը:

Բանվորները խիստ տուժում եյին ձեռնարկատերե-  
րի կամայականությունից: Նրանք հաճախ միանգա-  
մայն կամպայական և վոչնույն չարդարացվող տուգանք  
ներ եյին նշանակում բանվորների վրա: Կոմունան մի  
գեկրետ հրատարակեց, վորոնք արգելվում եր տուգանք-  
ներ նշանակել և վորեւ հանում կատարել աշխատա-  
վարձից:

Կոմունան միջոցներ ձեռք առավ գործազրկաւթյան  
դեմ պայքարելու ուղղությամբ՝ կազմակերպելով աշ-  
խատանքի բորսաներ և նախագծելով հասուեկ արհես-  
տանոցների կազմակերպումը։ Իտարական պատվերների  
կատարման համար Կոմունան Հիմնեց պետական արհես-  
տանոցներ, վորակեղ աշխատավարձը շատ ափելի բարձր  
էր, քան մասնավոր արհեստանոցներում։

Վորովհետեւ բոլոր աշխատանքները չեն, վոր կա-  
տարվում ելին պետական այդ արհեստանոցներում, այլ  
զբանցից շատերը հանձնվում ելին կապալսումներին,  
Կոմունան իր հակովաթյան տակ առավ բանվորների և  
կապալսումների հարաբերությունների վրա հսկելու  
գործը՝ պարտագրելով նրանց պահպանել 8-ժամյա-  
րանվորական որ։

Իսկ 8-ժամյա բանվորական որվա ընդհանուր գոր-  
ծադրության հարցը Կոմունան չըստեց, չնայած այդ  
հարցը գորեւ եր աշխատանքի հանձնաժողովին նախագահ  
Ֆրանկելը։ Այս տեսակետից Կոմունան ընթանում եր  
ինտերնացիոնալի յետելից, վորը գեռ 1866 թ. վորո-  
շում հանեց այն մասին, վոր բանվորների համար ան-  
հարժեշտ և ամենուրեք ձեռք բերել 8-ժամյա բանվորա-  
կան որ։

Ընդհանրապես Կոմունայի սոցիալ-տնտեսական գոր-  
ծունելության արդյունքները պետք եւ համարել չափա-  
ղանց համեստ։ Սակայն, չպետք է մոռանալ, վոր բացի  
Կոմունայի մանր բուրժուական կազմից, վորն ար-  
դելք եր հանգիստանում նրա այդ կարգի ձեռնարկում-  
ների վճռական բնույթին, Կոմունայի գործունելու-  
թյունն արտառություն կերպով կարծատել եր և ընթանում  
եր կենաց և մահու կատաղի պայքարի պայմաններում։

Այդ պատհառով կատարելութեա իրավացի յէ նրա  
գործիչներից մեկը, յերբ առում

«Իրականության մեջ անցքերի շեշտակի ըն-  
թացքը և պայքարի բոլոր փոփոխություններին  
արձագանքելու անհրաժեշտությունը թույլ չու-  
վեց քաղաքային գումարում նիստեր գումարող  
ժողովին ձեռնարկելու թեկուղ ամենափոքր սո-  
ցիալական փոփոխություն։ Թերթեցեք սկզբից  
ինչեվ վերջ՝ արձանագրությունները, գեկրեա-  
ները, ձեռնարկումները և գուք կհամոզվեք, վոր  
Կոմունան նույնիսկ ժամանակ չուներ ձեռնար-  
կելու առաջարկվող սոցիալական հարցերից և  
և վոչ մեկի լուծման»։

«Խոկ գլխալորը վորից զուրկ եր Կոմունան,  
զբում եր լենինը, —այդ ժամանակն ե, իր ծրա-  
գրի վրա նայելու և նրա իրականացման դիմելու  
հնարավորությունը։ Նա գեռեվու զործի չեր  
անցել, յերբ վերաբերում տեղակարգած կառավա-  
րությունը, վորին պաշտպանում եր ամբողջ  
բուրժուալիսան, պատերազմական զործողու-  
թյուններ սկսեց նրա գեմ»։

Արդարելք, Կոմունան իր տրամադրության տակ  
քիչ ժամանակ ուներ։ Նա հաջակվեց մարտի 28-ին, իսկ  
մայիսի 21-ին Վերսալի զորքերն արդեն խուժեցին Փա-  
րիզ։ Կոմունան ալլրեց 64 որ։ Նրա գոյության այդ  
կարճատեվ ըջանը մեջ առաջ գնում է Կոմունայի այն-  
քան արագ անկման պատճառների հարցը։ Մենք վե-  
տենք, վոր կամունայի գործիչները մեծագույն ջանք,  
անձնվիթություն գետի գործը, աղնվություն և ան-  
կաշու վերաբերմունք ցուցաբերեցին։ Ուղմական պայ-  
քարում նրանք ցույց տվեցին խիզախություն, արիու-  
թյուն և անձնազահություն, և, այնուամենայնիվ նը-  
րանց զեկավարած Կոմունան չափազանց արագ ընկավ  
թշնամու հարվածների տակ։ Վո՞րն ե զրա պահառը։

ԿՈՄՊԻՆԱՅԻ ՍԽԱԼՆԵՐԸ

Գրքի սկզբում արդեն մատնանշեցինք այն հաջողությունները, վոր Փրանսիական կապիտալիզմը ձեռքբերեց յերկրորդ կայսրության գոյության ըջանում։ Սակայն, չնայած այդ հաջողությունների մեծության, Ֆրանսիան Կոմունայի ժամանակ դեռևս խոչոր արդյունաբերական յերկիր չեր։ Մանր արհեստագործական արտադրությունը գեռեփս մեծ մասամբ պահպանում եր իր կշխուց յերկրի տնտեսականիանքում, առանձնապես նրա կենտրոնում և Կոմունայի գործունեյության վայրում։ Փարիզում։ Կոմունայի ապստամբության մասնակցելու համար դատապարտվածների ցուցակներից մենք կարող ենք տեսնել, թե արհեստաների տեսակետից ի՞նչ ելին ներկայացնում իրենցից Փարիզի աշխատավորները։ Մենք այստեղ գիտակորապես զտնում ենք հյուսներ, կոչկալարներ, վոսկերիչներ, կաշեքորներ, գլխարկ կարողներ, պուզմենտագործներ, կազմարներ, կարտոնագործներ և այլն։ Սրանք իսկական ինդուստրիալ պրոլետարիատի նիւթյացուցիչներ չեն, այլ արհեստավորներ կամ բանվորներ, վորոնք աշխատում են մանր տնտեսատերների մոտ և տնային արդյունաբերության մեջ։

Փարիզի աշխատավորության այսպիսի կազմով եր պայմանավորվում նրանց մեկուսացած վիճակը, դատակարգային կազմակերպություն ստեղծելու նրանց անկարողությունը և այնպիսի մարդկանց առաջքաշել չկարողանալը, վորոնք ի վիճակի լինելին զեկավարելու տնտեսության կազմակերպումը, մարտական գործանությունը և ընդհանրապես հանդիսանալու հեղափոխության առաջնորդներ։ Հատկապես դրանք են պատճենագործությունը, վոր ամբողջ շարժումը դարդացավ մանր-

բուժուական ինտելիգենցիայի ղեկավարությամբ և զաղափարական դերիչիումով, վորը բաժանված եր հաճախ միանգամայն անհաջորդելի հայացքներ ունեցող բազմաթիվ Փրակցիաների։ Պրոլետարիատի հասունացած ըլինելը, վոր առաջանում եր կապիտալիստական հարաբերությունների չզարգացած դրությամբ, բացատրում ե կոմունայի կամ կենտրոնական կոմիտեյի բոլոր մասնակի սխալները, տակտիկական սխալները, ծրագրի խառնաշփոթ վիճակը՝ ավելի չուտ ծրագրի իսպառ բացակայությունը։

Հատկապես զբանում պիտք ե վորոնել այն անթույշատրելի ներզամատությունն ու համաձայնողականությունը, վոր հանդես յեկավ կենտրոնական կոմիտեյի գործունեյության մեջ։ Մարտի 18-ի հեղաշրջումից հետո գրության լիակատար տերը հանդիսանալով, կոմիտեն վճռականություն չունեցավ հարձակում ականու կազմալուծված Վերալի վրա, չնայած այդ հարձակումը միմյանց հաջողություն կարող եր ունենալ։ Բացարձակապես ճիշտ եր ասում Կոմունայի գործիչներից մեկը, վոր «առաջ չդնացող հեղափոխությունը, ստուգապես դատապարտված և պարտության»։ Բայց կենտրոնական կոմիտեն այդպիսի նկատառումներով չեր զեկավարվում։ «Բոպեն ճեռքից բաց թողնվեց, — այդ առթիվ ասում ե Մարքար, — չցանկացան քաղաքացիական սրատերազմ ական, կարծես թե այլանդակ հրեց Տիերը արդեն չեր ական այդ պատերազմը գեռ Փարիզը զինաթափ անելու իր ճիրոճի ժամանակ»։

Կենտրոնական կոմիտեն ամբողջովին գտնվելով մանր-բուժութուական գեմովիրատական ցնորֆների ազգեցության տակ, շտապում եր վորքան կարելի յե իր ձեռքն ընկած իշխանությունը շուտ հանձնել «որինա-

կան և դեմոկրատական կառավագության» : Այստեղ նու կատարեց յերկրորդ և անթույլատրելի սիսալը : Դրա հետեւյանքը միայն այն չեղավ, վոր Վերասարը ժամանակ շահեց, — մորի միջոցին բանակցություններ ելին տեղի ունենաւմ հակածեղափոխական քաղաքագլուխների հետ, — այլ և գլխավորապես այն, վոր Քիչ թե շատ դասկարգային կառավարության փոխարեն իշխանության գլուխ անցավ իր կազմով չափազանց խայտարկեա կոմունան, վորն ավելի քիչ միատարր եր, քան նրան իշխանությունը զիջող կենաքոնական կոմիտեն : Մարքսն այդ առթիվ գրում է. «Յերկրորդ սիսալն այն է, վոր կենաքոնական կոմիտեն բավականն ըստ հրաժարվեց իր լիազորություններից՝ իր տեղը կոմունային զիջելու համար : Այս անգամ ևս ազնվության պատճառով, վոր ըստ հացված եր կադարձուծության աստիճանի» :

Կոմանալի խայտարդեմ կազմը կործանեց նրան, նախորդ մէծ մասամբ գատաղաբուած լինելով անգուրության և անգործունելության: Ինչպես ազդեն ասպեկտ, հեղափոխական հոսանքների բոլոր ներկայացուցիչների միջև չկար ամենաչիշտն իսկ համաձայնություն և միասնություն: Բյանկիստները, պրուռոկատները, մանր-բուրժուական ուսդիկալ հոսանք հանգիսացող յակորիները վեճի ելին բոնվում միմյանց հետ և պայքարում ամեն հարցի առթիվ:

Այդ պայքարի պրոցեսում կոմունալի խորհրդի անդամների մեջ հետզհետե նշմարվում եր յերկու խմբավորում։ Փոքրամասնություն պրոդուստական կողեկտիվիստական գունավորումով և բանկիստական-յակոբիստական մեծամասնություն։ Սակայն այդ խմբավորումներն այնքան ել վորոշակի սրարգված չելին։ Հաճախ մեծամասնության հետ ելին լինում բաղաթիկ ձափ

սլլուռադո՞նի խոտները, իսկ վոքքամասնության հետ՝ չա-  
փափոր ուղղիկաց յակոբինները։ Անգերջանալի վեճերը  
նրանց մեջ առաջացրին իշխանության կազմակերպման  
հարցը։ Պրուդոնիստները, հակիելով դեպի անարքիսիզմ՝  
ըստ երության դեմ ելին պետական իշխանության, իսկ  
բանկիստներն ու յակոբինները կողմնակից ելին հե-  
ղափոխական դիկտատուրայի, ընդ վորում նրանք, ա-  
ռանձնատպես յակոբինները, դիկտատուրա գաղտափարն  
քմբունում ելին 1793 թ. հեղափոխական ձեվերի ու հիմ-  
նարկների վերաբենդանացման իմաստով։ Համենայի-  
դարկների վերաբենդանացման ավել-  
իլ վճռական երևակի հեղափոխական։

Յերկու հակառակորդ խմբակներն առանձնապես սուր բայց սուր ունեցան այն հարցի առթիվ, վոր հարցուցից կոմունայի ծանր որերին և վերաբերում եր հասարակական փրկության կոմիտե հիմնելուն։ Մեծամասնությունն այդ հաստատությունն հիմնելու մեջ, զորի անունն այնքան շատ բան եր առում նրա մտքին և հոգում<sup>1</sup>), տեսնում եր մի միջոց ընդդեմ կոմունային սպառնացող բոլոր պատուհանների։

Մեծամասնության ներկայացուցիչներից մեկն իր  
յելույթի մեջ չափազանց ցայտուն կերպով ցույց տվեց,  
թէ հեղափոխական ռոմանատիկ՝ յակոբինների վրա ինչ  
ազգեցություն ուներ «Քիմքարկում եմ թեր» խոսքը : «Այն  
պատճառով, —ասաց նա, —ովոր «Հասարակական փրր-  
կություն» խոսքը վերաբերում ե այն նույն դարաշրջա-  
նին, ինչ «Փրամեսիակամե հեղափոխություն» և «Փարիզի  
կոմունա» խոսքերը...»

<sup>1)</sup> Թըսնսիական մեծ հեղափոխության տարիներին այսպէս եր կոչվում մանր բռերժուազիայի դիկտուտուրայի մարմիններից մեկը:

Յեթի այդ բանակովում մեծանության ներկասացուցիչներն իրենց ցուցաբերում ենին, վորպիս հեղափոխական ոռմանտիկներ, վորոնք չեն ըմբռնում այն պարբանները, վորոնց մեջ նրանք գործում են, ապա փոքրամասնությունը կատարում եր մի ինչ վոր բացարձակապես անթույլատրելի բան. նա, մեծամասնությանը մեղադրելով դիկտատորության մեջ, լրագրերում բաղրագործ հրապարակեց նրա գործողությունների դեմ: Հասարակակիան կարծիքին կատարված այդ բողոքարկումը տեղի յեր ունենում պաշտման պայմաններում, դասակարգային թշնամու գեմ մզլող լարված պայքարի մոմենտին, վորին իրազեկ ելին դարձել կոմունայում տեղի ունեցող տարածայնությունների մասին: Այդ լավագույն միջոցն եր նոր ուժեր ներշնչելու թշնամուն և մեծագույն շփոթ առաջացնելու սեփական շարքերում: Զի կարելի բավարար չափով բնութագրել այն բումը, վոր մարտիկ կոմունարների մեջ առաջացած կլիներ կառավարության մեկ մասի դեմ կատարված այդ հրապարակական մեղադրանքի դորավորության հետեւանքով, մի մեղադրանք, վորի տակ ստորագրել ելին նույն կառավարության ականավոր անդամները:

Եփեկտավոր Փրազների սիրահար հեղափոխական ոռմանտիկ՝ յակորիները մեծ մասամբ սահմանափակվում ելին այդ Փրազներով: Թվում ե, թե նրանց՝ իրենց 1793 թ. տեսորիստների ժառանդ համարողների համար դրույին կլիներ պայքար կազմակերպել հականեղափոխության և կոմունայի ծալոյալ թշնամիների դեմ: Մինչդեռ, կարծի կոմունայի գործունեյության մեջ չկա ամելի անհաջող կազմակերպված ասպարեզ,

բան այդ ասպարեզն է: Կոմունարները . մինչեւ կոմունայի գոյության ամենավերջին իսկ բազեները վճռականություն չունեցան տեսորիստական ձեռնարկումներ կատարելու: Խորհրդի անդամները միմիայն սահմանափակվում ելին «խոսքով գաֆան և գործով մեղմ վերաբերմունքով», ինչպես նրանց մասին ասել ե կոմունայի գործիչներից մեկը:

Թշնամիները դավագրություն ելին սարքում համարյա թե հենց Փարիզում: Վերսալականներին համակրող լրագրերը հայտնապես և հենց Փարիզում կամակարդություն մղում կոմունայի դեմ: Ժամանակակից պանիս ելին մղում կոմունայի դեմ: Ժամանակակից ներից մեկը, վոր յեղել ե՝ կոմունայի գործիչ, այսպես և նկարագրում ստեղծված դրությունը:

«Կացությունը սարավելի յեր: Կոխը տեղի յեր ունենում անընդհատ: Բոլոր կողմեցից սուլառնում ելին վորոգայթներ: Լրագրերը, վոր համարյա ամբողջովին գոնզվում ելին բուրժուազիայի ձեռքում, բողջովին գոնզվում ելին բուրժուազիայի կոչ ելին անում վոչնչացնել կոմունան և ծավահարում ելին, յերբ մենք պարտվում ելինք ներանք ամբատանում ելին Աղջային գվարդիայի զինվորներին, նկարագրում ելին մեր պատերազմական տեղաշարժումները, բացահայտ դավադրություններ ելին կազմում մեր թշնամիների հետ միասին...» Յեկագմուն մեր թշնամիների հետ միասին...» Յեկագմուն պայմաններում կոմունայի բազմաթիվ անդամներ գտնում ելին, վոր «մամուլին հալածելը հակասամարտական և զզվելի»: «Այդ ասպարեզամարտական և զզվելի»: «Այդ ասպարեզամարտական և զզվելի»:

Արդելված շուրնալները յերկրորդ որը լույս ելին տեսնում նոր անունով։ Հալածվող լրագրերն իրենց ներկայացնում ելին, վորպես զոհեր և աղաղակում ելին մեծ սկզբունքների մասին»։

Կոմունայի ամբողջ տեսորիստական գործունելությունը հազվագյուտ անսխատեմ եր, անփառոն, զուրկ վորոշ ուղղությունից և անհաստատ։

«Դիկտուրայի տերորի մասին յեղած խոսքերը մեծ մասամբ գելլարացիա ելին, մի առողք՝ 1793 թ. հեղողություններին . . . Մեծամասնությունը, վորքամասնության նման դասակարգային ամուս հենարան չգտնելով իր վոտքերի տակ և անզրությունով դասակարգի մեջ գտնել կամ թեկուզ չոշաբել հեղափոխության համար միակ հնարավոր հենարանը, մինչեվ ապրիլի վերջը չվերացրեց համաձայնողականության մասը բուրժուական պատրանքները»—ասում է Կոմունայի պատմաբաններից մեկը։

Կոմունայի համար ճակատագրական նշանակություն ունեցավ ռազմական գործի կազմակերպման անկարողությունը։ Կոմունան իր արամազրության տակ ուներ մարտական սքանչելի նյութ՝ Փարիզի հեղափոխականության արամազրված արհեստավորներին և բանվորներին, և նա չկարողացավ բավարար չափով ոգտագործել այդ նյութը։ Այն ժամանակ տարածված անարխիստական հայացքների համաձայն կոմունարները բնավ չելին կարողանում լուծել այն հարցը, թե ապամական դիսցիլինան, արդյոք, պետք է պահպանել հարկադրակա՞ն միջոցներով, թէ՞ պետք է սահմանափակիլ միայն վատահանալով փարիզցիների խանդավառությանն ու հեղափոխականությանը, — կարծես

թե վորեւ բանակ կարող է կաղմվել առանց հարկադրական դիսցիլինայի։ Կոմունայի մեծագույն գժբախտությունն այն եր, վոր նա չըներ կորովամբիու և դործին նվիրված գլխավոր զորահրամանատար։ Ընդհանրապես ռազմական մասնագետների հարցը Կոմունայի համար, վորը անցել եր հրամանատարական կազմի ընտրական սիստեմին, կատարելապես անդուժելի իրնպարի եր։ Հրամանատարական կազմի բնարական սիստեմը՝ հեղափոխական այլդ միջոցը, վարդությունը և հեղափոխության միջոցով խորակվող կարգերը, հեղափոխության համար մզվող պայքարի սուր մոմենտներին միքիայն կարող և քայլքայիլ հեղափոխական բանակը։ Նույն րունը կատարվեց Կոմունայի բանակի հետ։ Վորպես զրծարակությունը լրացնող մի հանգամաներ՝ հրամանատարական կազմի գործունելությունը չեր սահմանագծված զորամասերի բնարովի կազմակերպությունների գործունելությունից, վորոնք նույնիսկ միջամտում ելին գործառնական կարգադրություններին։

Այդ ամենի հետեւանքը յեղավ պատերազմական գործում առաջացած մեծագույն քառոսը։ Կոմունայի արամազրության տակ յեղած Ազգային գվարդիայի բաղմաքանակ զինվորներից մարտի գիրքերում կային վոչ ավելի, քան 15—16.000 հոգի։

Զորամասերը յերկար ժամանակ ստիպված ելին խրամաներում մնալ առանց հերթափոխության, մինչդեռ մնացածներն ամբողջ ժամանակ մնում ելին թիկունքում։ Շատ հաճախ ջոկատները սեփական նախաձեռնությամբ լքում ելին դիրքերը կամ զրո՞նի զիմում։ Պահեստի ուժեր կամ չելին դալիս, կամ զարիս ելին չափաղանց ուշ։ Շատ վատ հիմքերի վրա ելին

գրված հետախուզությունն ու պահակային ծառայությունը։ Այս բոլորին միացրած բարձր հրամանաւուրության հաճախակի փոփոխությունը և Կենտրոնական կոմիտեի անվճականությունը՝ վերը հրաժարվեց հարձակողական տակտիկայից, կանխորոշեցին Կոմունայի ռազմական պարտությունը։

Կոմունարներն արտակարգ փափկանկառություն ցուցաբերեցին մասնավոր սեփականատիրության նըկատմամբ։ Նրանք, վորպես մանր բուրժուաներ, իշարկե, այդ հարցում այլ կերպ չելին կարող վարդել։ Սակայն կար մի մոմենտ, յերբ նրանց այդ վարժունքը հավասարազոր դարձավ Կոմունայի դավաճանության։ Մենք նկատի ունենք կոմունարների վերաբերմունքը Ֆրանսական բանկին։ Այդ բանկում կային ահռելի հարստություններ։ միայն հնչուն դրամ կար այդտեղ 77 մլն. ֆրանկ, թղթադրամ՝ 166 մլն. ֆրանկ, պետական արժեթղթեր՝ 900 մլն. ֆրանկ։ Բնդ հանուր առմամբ բանկում կար 3 միլիարդ ֆրանկի արժութ, վորից 1 մլրդ։ Դրամ։ Բացի այն հանգամանքից, վոր կոմունան, տիրամալով այդ միջոցներին բավականաչափ կմեծացներ իր ուժն ու սեսուրաները, բուրժուազիային պատկանող այդ գույքի զրավումը, նույնիսկ վոչ թե գրավումը, այլ և զրավման սպառնալիքը վերառնին անհամեմատ ավելի զիջող կրաքանեյին։ Մինչեւ նման վոչ մի քայլ չհեռանարկվեց։ Բանկը մնաց կատարելապես անձեռնմխելի։ Այդ առթիվ կոմունայի ժամանակակիցներից մեկն ասում է.

«Բոլոր լուրջ ապստամբությունները սկսել են նրանով, վոր կարել են թշնամու նյարդը՝ գանձարանը։ Միայն կոմունան հրաժարվեց դրանից։ Նա վերացրեց կրոնական նպատակներով հատկացվող

բյուջեն և հարգալից սարսափով կանգ առաջ բարձր բուրժուազիայի բյուջեյի առաջ, վոր գտնվում եր իր ձեռքում»։

Այս հարցում ուրիշ կարծիք ուներ կոմունար Բելենին, վորը զեկալվարում եր բանկի հետ կոմունայի ունեցած հարաբերությունները։ Նա ասում եր, թե

«... Անհրաժեշտ է հարգել բանկն իր բոլոր արտօնություններով և զույգով, պետք ե, վոր նա բարձր կանգնած լինի իր անձեռնմխելի վարկով և իր առմասերով, վորոնք փոխարինվում են հնչուն զրամի հետ։ Դրանով շահագրգոված և ամրող ֆրանսիան, հետեւաբար նուև Վերսալը։ Սակայն նույնիք, ամելի շահագրգոված և Փարիզը, իսկ Փարիզի հետ միասին նաև Կոմունան։ Յեթի մենք ձեռնարկենք բանկի գրավման, յեթե մենք Աղջային գվարդիայի միջոցով գրավինք նրան, այն գեպքում մենք կտիրանանք մետաղի Փոնդին, բայց զրա փոխարեն կառաջանա մի սարսափելի ճգնաժամ, վորի պատճառով Փարիզի վրա կհարձակվի ամբողջ աշխարհը, իսկ Կոմունայի վրա՝ Փարիզի ամբողջ աղջաբանակչությունը»։

Բելեյի արտահայտած տեսակետը բնալ բացառություն չեր հանդիսանում։ Կոմունայի պատճառավոր և Փինանսական ասպարիզում աշխատող Ժուրդը նույն շես գտնում եր, վոր Կոմունայի համար «վերին սատիւնիք ելական նշանակություն ունի Փրանսիական բանկի պահպանումը»։

Բոլոր ամենավճուական առաջարկները, որինակ՝ յերկաթուղային կամպանիայի սեփականության գրավման, քաղաքից փախած առելտրականների վրա կոնտրերուցիա սահմանելու վերաբերյալ՝ առանց բացառու

թյան մերժվում ելին կոմունայի Խորհրդում: Այսիսի  
21-ին՝ այն որը յերբ վերսալականները խոռվեցին Փա-  
րիզ, կառավարական լրագրում լույս տեսալ՝ հայտնի  
չե, թե ում հաղորդած տեղեկությունը, թե իր տու-  
ժեկայում վերացվելու յն սենտայի գրանցումը և  
պարտքերի ՄԵծ գիրքը: Այդ լուրը խիստ զայրութ ա-  
ռաջացրել կոմունայի անդամների մէջ:

ԿՈՄՈՒՆԱՆ ՅԵՎ ԳԱՎԱԾՈՒՅԹՈՒՐ

իսկ ի՞նչ արեց կոմունան Փարիզի սահմաններից  
այն կողմ հեղափոխությունը տարածելու համար և ի՞նչ  
միջոցների վիճակ վոտքի հանելու նաև յերկրի մյուս  
կենարոնները և բաղմամիլիոն դյուզացիությունը: Այն-  
քան քիչ բան, վոր նույնիսկ ծիծաղելի յէ: Կին զրոյ  
սոցիալիստ Անդ սկ Լեոյի ձեռքով գրած մեկ խոռոշիկը՝  
ուղղված գյուղացիության՝ բացառություն և հանդի-  
սանում: Գավառների հետ հարաբերություն պահպա-  
նելու համար Համարյա վոչինչ չեր կատարվել: Այս  
կամ այն մահֆեսոնի հրատարակումը, առանձին եւր-  
այն անձանց հետ, իսկ յերեմն ուղղակի Ենդհարումներ  
գալուսի և կորուսի միջնորդ ելին հանդիսանում  
ծովներությունը, վոր ցույց և տվել կոմունան այս կա-

«Քետք և վերջ տալ այլ գործակալներին», — բառ  
ցականչել և կոմունայի բարարին Հարաբերություններ-  
ի գործի ղեկավարը: Այդ կարծիքն արտահայտվում  
էր այն ժամանակ, յերբ բազմաթիվ քաղաքներում հան-  
գաքային ընտրություններում, յերբ այդ քաղաքային  
ընտրված իշխանությունները գումարվում ելին սուացը վա-  
րելու առաջարկում:

Պորձում ներգործել Վերսալի վրա քաղաքացիական  
պատերազմը գալարեցնելու իմաստով: Եել այդ ժա-  
մանակ Փարիզը կարված եր գովածոից և լություն եր  
պահպանում: Նրանից հետո այլոյն կարէք կա՞ հիշա-  
տակելու, վոր գավառակոն խոչը կենարոններում (Լի-  
ոն, Մարսել, Տուլու և այլն) առաջացած ապառում-  
բական առանձին բռնկումները ջախջախվեցին մէկ սո-  
մէկ, իսկ Փարիզը մէնակ մնաց իր պայքարի մէջ վեր-  
սալի հետ և կործանվեց այդ պայքարում:

Բացառիկ ճակատագրական գեր խաղաց գյուղա-  
ցիության անտարբերությունը և նոյնիսկ թշնամական  
վերաբերմունքը գնապի կոմունան: Մարքսը յինթադ-  
րում եր, թե յերեք ամիս հետո ամբողջ գյուղացիու-  
թյունը կարող էր անցնել ապատամբ Փարիզի կողմը: Ան-  
տարակույս, այդ բանը կարող եր տեղի ունենալ, յե-  
թե գյուղացիությունը ճիշտ կերպով կարողանալ ուստա-  
կերացնել իրեն Փարիզի արևատամբության իմաստն ու  
նպատակները: Բայց Փարիզը պաշարած վերսալի կա-  
ռավարությունը ձեռք առաջ ամեն հետալոր միջոց՝  
նրան գյուղացիական մասսալից մեկուսի սրահներու հա-  
մար: Դեռ ավելին՝ նա Փարիզի վրա կեզծիքի ու զրը-  
պարտության տարափ տեղայ՝ շուշող ործելով գյուղա-  
ցիների խավարամությունն ու սեփականամուլ բնազդ-  
ները: Հեքիսմներ հնարեցին «քած անողների» մասին,  
ինչպես 1848 թ., զարհուրելի առավելներ նյութեցին  
Փարիզցիների մասին, նկարագրեցին կողապատներ և  
վորպիս թե նշանց ձեռքով կատարված բանություններ  
գյուղացիների վերաբերմամբ:

Իսկ Փարիզի հեղափոխականները շատ քիչ բան ա-  
րեցին խորտակելու կեզծիքի ու զրպարտության այդ  
անջրպետը և կապվելու գյուղացիության հետ:

Այսուամենայնիվ՝ գյուղացիության հետ մերձենալու գաղափարը բնակ ուսարութիւնը կոմունարներին։ Այսպես՝ Ազգային գվարդիայի Կենտրոնական կոմիտեի վորոշումը՝ «Խստիվ պահպանել հաշտության պայմանագրի սկզբնական պայմանները հանուն հանրապետական ֆրանսիայի և ընդհանուր խաղաղության գործի փրկության» —պետք է հակառակությունության ձևութից խէր գյուղացիների աշխատ կարեգորագույն հանդիսացող դենքը, իսկ այն՝ սկզբունքի հոչժումը, թե «անողոք հաղթողի կողմից ֆրանսիայի վրա գրված կոնտրիբուցիայի մեծ մասը ունետք է վճարեն այդ անիծյալ պատերազմի մեղավորները», այսինքն՝ նախորդ կայսրության կառավարող խմբակները՝ պետք է շուշագրութեր գյուղացիներին, վորոնք պլիսավոր հարկատուներն ենին։ Նման հայտարարություններն, անկանակած, պետք է նպաստելին գյուղացիության համակարգը գրավերուն։

Սյու տեսակետից ավելի հետաքրքրական է վերևուն հիշատակված կին սոցիսալիստ Անդրե Լեոյի թուուցիկը :  
«Մի՛ մոռացեք, — զրում եր նա, — վոր գյուղացացիներին ամենից շատ առաջին հեղափոխությունը կապում եր կոտի և բեղարի վերացումը, ինչպէս և ազգային գույքի բի՛) վաճառումը» : Հեղափոխության ըմբռնումը նրա մեջ սահմանափակվում եր դրանով... Նրա հետ սկսեք խոսել քաղաքականության մասին, փորձեցեք համոզել նրան, թվեցեք նրան անհրաժեշտ ու Փորմները՝ նա ձեզնից հետո առնա համարյա անփույթ, առաջվա նման շվատա-

<sup>1)</sup> XVIII գ. Հեղափոխության դարաշրջանում ազգային գույքը եյին համարվում հոգեկորականություննից զրաված այն հոգեռը, վրաբնք վաճառքի եյին հանվում և զնվում մէծ մասմբ դյուզացիության ձեռքով:

Հելով, վորպեսզի մի ըուզե հետո մոռանա այն ա-  
մենը, ինչ դուք նրան ասացիք: Խոսեցեք նրա հետ  
հարկը պակասեցնելու, վարկ կազմակերպելու, նը-  
րա այն բազմաթիվ տոկոսներից աղատվելու մա-  
սինի, վոր նա վճարում ե կապիտալի դիմաց, և նրա  
հայցը կենդանանա ու անկեզծորեն ձեզ կասի՝  
յեթե այդ այլպես ե, ապա յես ձեզ հետ եք: Գոր-  
ծելով նույն յեղանակով, ինչ կատարվել է 1789 թ.  
հեղափոխության ժամանակ, այսինքն՝ հողի աղա-  
տելով արդի ճորտատիրական իրավունքից, մենք  
գյուղացուն կկապենք նոր հեղափոխության հետ,  
գործ հանդիսանում ե առաջինի լրացումը»:

ԿՈՄՈՒՆԱՑԻ ԱՆԿՈՒՄԸ

Երնչեվ զոր կոմունան աշխատում եր ամբողջ ու-  
ժով վանել իրենից քաղաքացիական պատերազմի միտ-  
քը, Վերսալն անպատճառ և բացահայտ ձեվով պատ-  
րաստվում եր դրան՝ համապատասխան նախապատրաս-  
տություն կատարելով գալառի ազգաբնակչության  
մեջ:

«Համարձակ և զայրացած Ֆրանսիան,—գրում եր Տիերը իր հեռավրելից մեկում,— համախմբվում է կառավարության և ժողովի շատրվ՝ ճգմելու անարիթան, վոր դեսիս վորձում է կառավարել Փարիզին»:

Ապրելի սկզբին Տիերին հաջողվեց բավականաչափ զորք տեղափոխել պատերազմական գործողութուններ սեփական համար : Այլ ժամանակ դավառ ուղարկած հեռացրելից մեկում Տիերը անցողիկ կերպով պատժելով, թե կոմունարները հափշտակում են հասարակական պահարանները, հայտնաւմ են, թե նա իր արամագրության տակ ունի այժմ «մեկն այն հոյակապ բանակներց», զոր յերբյելից և անեցել ե ֆրանսիան :

Այդ բանակը Տեղի է հաջողվեց ստանալ միայն  
ոլլուսացիների հետ կուպած գործարքի չնորհիվ, վորոնք  
վեռադարձին 130.000 լեռված Փլանիսիացի զինվոր՝  
Ֆրանսիայի ներքին կարգը վերահաստակելու համար։  
Դերությանից վերադարձած զինվորները սպասած  
